



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

31(5)04

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳՅՈՒՏԵՐ ՅԵՎ, ՃԱՆԱԳԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռուս. թարգմանել
Ա. ԱՅԳԻՆՑԱՆ

Նկարները՝ ՎԵՐԱ ՎԱՐԳԱՏՐԻԿՑԱՆԻ



ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԿԱԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ — ՅԵՐԵՎԱՆ — 1935

π
A 50077

Պատ. խմբագիր՝ Ս. Բերբերյան
Հեղվակա՞ն խմբ. Ա. Առստամյան
Տեխ. խմբագիր՝ Հ. Տեր-Դավթյան

Գ Լ Կ Լ Ի Խ 144
Հրատ. № 3241
Տ Է Բ Կ Ժ 3000

Հանձնված և տրամ. 28/VIII 1935 թ. Ստորագրված և տպվում 22/IX 1935 թ.
Մֆ. Ա5 — 143 X 210. Պատվիր 4219

Гипография им. Стачки 1902 г. АЧКПТ Ростов на-Дону.



Ռուբեն Գրիբ, - վերջին վաղջույնը «Ռուզվելտից»

ՀՅՈՒՍԻՍԱՆՅՈՒՆ ԲԵՎԵՌԻ ԳՅՈՒՏԸ

Այն ժամանակից, յերբ մարդիկ գտան յերկրի ձևն ու շար-
ժումը, բեռները զոյաթյան մասին աշխատեցին կառնած չմնացի
Հայտի յեր դարձել նաև, թե ինչ կարելի չե տեսնել բեռները
վրա տարվա վորեկ յեղանակին։ Սակայն մարդիկ վաղուց եյին
ձգտում հասնելու յերկրագնդի այդ մաթեմատիկական կետին, վո-
րը կոչվում է հյուսիսային բևեռ, վորտեղ չկա ժամանակ, վորտեղ
վոչ հյուսիս կա, վոչ արևմուտք, վոչ արևելք, այլ — միայն հա-
րավ և փչում է միայն հարավային քամի, վորտեղ, բացառութեամբ
բեռնային աստղի, բոլոր աստղերը հորիզոնին զուգահեռ շրջան
են գործում, վորտեղ տարին բաղկացած է միայն մեկ ցերեկից
ու մեկ գիշերից։ Այդպես եր գրում ամերիկական ծովային ինժե-

ներ Ռոբերտ Պիրին իր «Խնչով ե հրապուրում հյուսիսային բե-
վեռը» հոդվածում: Իր մի ուրիշ աշխատություն մեջ նա գրում ե.
«Խնչ ել վոր ասելու լինեն բեռնային հետախուզությունների հա-
կառակ, այնուամենայնիվ բեռնային աշխատանքի ներքին հմայքը
և մարդու անհաղթելի ձգտումը դեպի յերկրի դեռևս մինչև այսօր
անհայտ մնացած անկյունը՝ պետք ե գրավեն նրա ջանքերը դե-
պի սպիտակ հյուսիսը մինչև այն ժամանակ, յերբ քարտեզի վրա
կրեքվի ջրի և ցամաքի յուրաքանչյուր քառակուսի մղոնը»:

Ամերիկացի Ռոբերտ Պիրին բեռնային յերկրների շատ այդ-
պիսի անկյուններ ե հետազոտել և քարտեզի վրա անցկացրել. և
վերջապես 1909 թ. իրագործեց յուր նվիրական ցնորքը, վոր
փայփայում եր նա ամբողջ 23 տարի — հասնել հյուսիսային
բեռնին:

Ռոբերտ Պիրին (Peary, ծնվել ե 1856 թ., մեռել ե 1922 թ.) վա-
ղուց ե բեռնային ճանապարհորդի հռչակ ձեռք բերել և մի շարք
եքսպեդիցիաներ կատարել դեպի հյուսիս:

Առաջին անգամ նա ուղևորվեց 1886 թ. դեպի Գրենլանդիա,
հետազոտելու գրենլանդական սառույցը, և հասավ գրեթե հյուս-
լայնության 70⁰-ին:

Գրենլանդիան, վորի գծագրությունը մինչ այն հայտնի չեր,
այդ որվանից դարձավ նրա գործունեյության գլխավոր ասպա-
րեզը:

1891—1892 թ. թ. նա 13 ամիս անցկացրեց հյուսիսային Գրեն-
լանդիայում: Ճանապարհորդության սկզբում նա կտրեց վոտքը,
բայց այդ յիտ չպահեց նրան: Ձմեռելով կղզու ափին, նա ամառը
միայն մի ուղեկցով բարձրացավ Գրենլանդիայի ներքին սարա-
հարթը, 2400 մետր բարձրության վրա, սառցե անապատի վրա-
յով սահնակով անցավ 1200 մղոն և վերջնականապես սահմանեց,
վոր Գրենլանդիան կղզի յե և վոչ թե բեռնային մեծ ցամաքի մի
մասը, վոր հասնում ե մինչև բեռնը:

Հետևյալ տարին Պիրին նորից ուղևորվեց դեպի հյուսիսային
Գրենլանդիա, վորտեղ անցկացրեց 25 ամիս, դարձյալ սառույցի
վրայով սահնակով անցավ 1200 մղոն, ավարտեց Կետի նեղուցի
եսկիմոսների ուսումնասիրությունը, մանրամասնորեն հետազո-
տեց հյուսիսային Գրենլանդիան և գտավ Յորք հրվանդանի վրա
ողաքարեր: Վերջապես ճանապարհորդություն կատարեց 1896 և
1897 թ. թ. ամառը և այն ժամանակ Ամերիկա տարավ ամենա-
մեծ ողաքարը՝ (մետեորիտ) 90 տոնն ծանրությամբ:

Մինչև Գրենլանդիայի հյուսիսային ափերի հետադուռութիւնը, կարելի կլինէր մտածել, Վոր հյուսիսային բնեւոր դտնվում և ցամաքի վրա:

Այժմ ամենքի համար պարզ դարձավ, Վոր բնեւոր չըջապատված և բնդարձակ ծովով, Վորը ծածկված և լողացող և շարունակ շարժվող սառույցներով: Վորոնց միջով վտչ մի նավ անցնել չի կարող:

Բնեւորն հասնելու համար մնում ևր միայն մի միջոց. — վտտքով դնալ սառուցի վրայով, իսկ ուտեստի պաշարն ու հանդերձանքը տանել սահնակով:

Այդպիսի ճանապարհորդության առաջին փորձ կատարեց Պարրին (1827 թվին)՝ Շպիցբերգենից դեպի հյուսիս:

1898 թ. սկսվեցին Պիրիի այդ միջոցով բնեւորն հասնելու



Ռ. Պիրիի ճանապարհորդութիւնը Գրենլանդիայում:

Վոր ձերը՝ ամերիկյան արշիպելագից դեպի հյուսիս: 1898 թ. մինչև 1902 թ. նա անցկացրեց Սառուցյալ ովկիանոսի (Բենեույին ծովի) ամենահյուսիսային ծայրին, ձմեռեց, կարեց-անցավ մեծ տարածութիւններ Գրենլանդիայի, Գրանտի Յերկրի ափերով: Վորի ժամանակ քիչ մնաց հաշմանդամ դառնար, վորովհետև ցրտահատ ելին դարձել վտանքի մատներից ութը, վորն և հարկ յեղավ անդամահատել: 1900 թ. Պիրին սառուցների վրայով հասավ հյուսիսային լայնության $83^{\circ}54'$ -ին, Գրենլանդիայի ափերից դեպի հյուսիս: 1902 թ., չնայած սառուցից ազատ տեղերին, այնուամենայնիվ նա հասավ հյուս. լայն. $84^{\circ}17'$ -ին, բայց սառուցից ազատ տեղերը նրան արգելեցին ավելի հեռուն դնալ:

Վերադառնալով ՀԱՄՆ-ը, Պիրին նորից մի եքսպեդիցիա կազմակերպեց: Փայտից կառուցած «Ռուզվելտ» անունով հատուկ նավով նա հասավ մինչև Շերիդանի հրվանդանը, վոր դառնվում է Գրանտի Յերկրի հյուսիսային ափին, իսկ հետո հասավ ավելի ևս դեպի հյուսիս ցցված Հեքլա հրվանդանին: Այստեղից միջորենյականով շարժվեցին ոժանդակ խմբերը պարենի պաշարով, իսկ նրանց հետևից գնում եր Պիրին մի փոքրիկ խմբով: Այս անգամ եքսպեդիցիան հասավ հյուս. լայն. 8706'-ին (1906 թ. ապրիլի 21-ին): Բայց այստեղ ուժեղ փոթորիկը կոտորեց սառուցները, վորոնք սկսեցին լողալ դեպի արևելք, իրենց հետ տանելով Պիրին և նրա ուղեկիցներին: Յերը սառուցից ազատ տեղերը ծածկվեցին սառուցով, Պիրին նրանց վրայով անցավ Գրենլանդիայի ափը և 1906 թ. վերջին թերադարձավ Նյու-Յորք:

Անհաջողութունները չթուլացրին Պիրի յեռանդը, իսկ նրա հոչակն ու հեղինակութունը, վորպես բևեռային հետախույզ, այնքան խոշոր ելին, վոր միջոցներ տրվեցին նոր եքսպեդիցիայի համար:

1908 թ. հուլիսի 5-ին 21 մարդուց բաղկացած եքսպեդիցիան «Ռուզվելտ» ղրոսանալով մեկնեց Նյու-Յորքից: Ինքը Պիրին այդ ժամանակ 53 տարեկան եր, և միայն Ֆրանկլինն եր այդ տարիքում թափառում բևեռային ծովերում: Յորք հրվանդանի մոտ (հյուսիսային բևեռային շրջանի և բևեռի միջև ընկած ճանապարհի կիսում), վորտեղ Պիրին դտավ նշանավոր ողաքարեր, դտնվում եր եսկիմոսների մի փոքրիկ գյուղ: Այդտեղ առաջ ել յեղեղ են բևեռային ճանապարհորդներ. հենց ինքը Պիրին 2 տարի առաջ ապրել է այդտեղ, և գյուղացիները նրա լավ բարեկամներն ելին, վորոնց հետ նա խոսում եր եսկիմոսներին:

Այստեղ նա իր հետ վերցրեց եսկիմոսների մի քանի ընտանիք, վորոնք համաձայնեցին ուղեկցել նրան, և մոտավորապես հարյուր շուն, փոխարենը տալով դանակներ, ամաններ, լուցիկ և այլ իրեր: Նավում կային այժմ 246 շուն և 69 մարդ, վորոնց թվում կանայք և յերեխաներ:

Սկսվում եր ճանապարհի ամենավտանգավոր մասը: Ավելի քան 600 կմ «Ռուզվելտը» լողում եր բևեռային սառուցների մեջ: Ամեն կողմից դեպի նալն ելին նետվում հսկայական սառցե լեռներ, և մի անգամ ել նա նույնիսկ ընդհարվեց ալբերգի* հետ:

* Լողացող սառցասար

Բայց ամեն բան լավ վերջացավ: Սեպտ. 5-ին «Ռուզվելտը» ժամանեց Շերիդան հրվանդանը՝ Գրանտի Յերկրի վրա: Այստեղ երապեղիցիան անցկացրեց ձմեռը: Պարենամթերքն ափ հանեցին և տեղավորեցին քարից շինած նկուղներում, իսկ մարդիկ մնացին նստում, վորն ամուր նստել եր սառույցների մեջ, ափից 150 մղոն հեռու: Մյուս պահեստը շինված եր 160 կմ հեռավորության վրա Կոլումբիա հրվանդանի մոտ, վորտեղից յենթադրվում եր, գնալ գեպի բևեռ:

Շերիդանի հրվանդանից մինչև բևեռն ուղիղ դժով 810 կմ ե: Փետրվարի սկզբին յերկինքն ավելի պայծառացավ, սկսվեցին ուղեորվելու պատրաստությունները: Երապեղիցիան հրվանդանից ուղեորվեց Կոլումբիա փետրվարի 22-ին: Պահեստներ շինելու համար նախապես ոժանդակ խմբեր եյին ուղարկվել: Ինքը Պիրին գնում եր Բարտլիտի խմբի յետևից, յերկու եակիմուսի ուղեկցությամբ, ունենալով 2 սահնակ և 16 շուն: Ողի բարեխառնություն 35⁰ եր, և ձյուն եր գալիս:

Ճանապարհն անցնում եր սառցադաշտերով կամ այսպես կոչված «պակերով», այսինքն բևեռային սառույցների չընդհատվող կիտվածքների միջով: Սառցադաշտերի ավելի հին մասերն ունեն հարթ և առաջ շարժվելու համար հարմար մակերևութ, բայց արիշ տեղերում սառույցը քամու ետքների շնորհիվ իրար վրա յի գիցվում և սրածայր բլուրներ գոյացնում, վորոնց միջով անցնելը չափազանց դժվար և: Ամենազլխավոր արդեկքը և ամենից վտանգավորը վորտե՛մուր ջրանցքներն են կամ սառուցից ազատ տեղերը, վորոնք սառցադաշտը կտրում են դանադան ուղղությամբ, անհետանում են մի տեղում և յերևում են մի ուրիշ տեղ: Սառույցն ամեն բոպե կարող և բացվել ճանապարհորդի վտաքերի առկ, վորը կառավի ջրի մեջ կամ, լավագույն դեպքում, սառը լողանք կընդունի 40⁰ սառնամանիքում: Ճանապարհորդն ստիպված և լինում կանգ առնել ջրանցքի առաջ և սպասել, մինչև նա սառչի, վոր կարողանա առաջ շարժվել: Դաժան սառնամանիքներ, թափանցող քամիներ և բուքեր, ձյունից և սառուցից շինած վրանում գիշերել, աղքատիկ սնունդ, — ահա սառցադաշտերի վրայով կատարվող ճանապարհորդության սովորական պայմանները:

Ոժանդակ խմբերը կամաց-կամաց յետ եյին քաշվում, իսկ Պիրիի խումբն առաջ եր գնում: Յոթ անգամ նա կանգ առավ սառուցից ազատ տեղերի պատճառով: Յերկրորդ մեծ անցքի առաջ հարկ յեղավ սպասել հինգ որ, մինչև նա կծածկվեր սառուցով:

Պիրին կորցնում եր համբերությունը և աչքը չեր հեռացնում մեծ անցքից, սպասելով այդ մոմենտին, ինչպես նաև ոժտանդակ խմբի յերևալուն, վոր պետք է ճարպ ու սպիրտ բերեր. իրենց, նսկի-մոսները նույնպես սկսել էին ջղայնանալ, խորհրդակցել միմիանց հետ, և մի քանիսը նույնիսկ հայտնեցին, վոր իրենք հիվանդ են և այլևս առաջ գնալ չեն կարող:

Բարեբախտաբար վրա հասավ խիստ սառնամանիքը և ջրանցքը սառցակալվեց: Պիրին նրա վրայով անցավ մյուս ափը (խակ հետո հաջողվեց անցնել Պիրիի գլխավոր ոգնականներից միկին՝ Մարվինին) և ճարեց ուտեստի պաշար: Մարվինը Պիրինն ուղեկցեց մինչև հյուս. լայն. 86°34' և վերադարձին խեղդվեց ջրանցքներից մեկում, այնպես վոր նրան ուղեկցող եսկիմոսները չեղին նկատել, թե այդ ինչպես պատահեց:

Վերջին ոժտանդակ խումբը Բարտլետի գլխավորությամբ Պիրիից բաժանվեց հյուս. լայն. 87°46'-ի տակ. եքսպեդիցիան կըրճատվեց և հասավ վեց մարդու: Պիրին, նրա Հենսոն անունով նեգը ծառան՝ Պիրիի այդ անդամաճան ուղեկիցը նրա բեկոային բոլոր ճանապարհորդությունների ժամանակ և չորս եսկիմոսները քսպեդիցիան ունեն հինգ սահնակ և 40 շուն:

Քանի մոտենում էին բեռին, այնքան ճանապարհը հարթ եր դառնում, ուստի և առաջ շարժվելը հեշտանում եր. մի քանի որվա ընթացքում հաջողվեց անցնել 45 կմ ավելի տարածություն: Զրանցքներ բռնական հաճախ էին պատահում, բայց նրանք անցնում էին թարմ սառուցի վրայով, վոր ճկվում եր վտռների տակ: Արդեն ամիսուկես եր անցել այն որվանից, ինչ եքսպեդիցիան թողել եր նավը: Յե՛վ մարդիկ և՛ շները, ամենքն ել առողջ էին, բայց սաստիկ նիհարել էին և շատ էին տանջվում ցրտից:

Բեռին մոտ (8 կմ հեռու) չափեցին՝ խորությունը: Յերբ արդեն բաց էին թողել խորաչափի մետաղալարի 2743 մետրը, մետաղալարը կտրվեց և հատակը չկարողացան դնել: Այնուամենայնիվ չափելու այդ անհաջող փորձն ապացուցում ե, վոր Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի խոր մասը, վոր դուր եր Ֆրիտլոֆ Նանսենը «Ֆրամ» նավով ճանապարհորդելիս, շարունակվում և մինչև բեռն:

Ապրիլի 6-ին, առ. ժամի 10-ին եքսպեդիցիան կանգ առավ: Հաջովով նա պետք է արդեն բեռնում լիներ, բայց չափումները ցույց էին տալիս հյուս. լայն. 89°57': Սկզբում Պիրին պառկեց

հանդատանալու. բայց շուտով զարթնեց և թեթեւ սահնակով յերկու ետերքներէն հետ առաջ գնաց 8 կմ եւ: Մինչ այդ յերկինքը պարզուեալ եր. կտրելի կլինեալ աստղաբաշխական դիտողություններ անել. հայտնվեց, վոր Պիրին արդեն կտրել անցել և բեկոս յին կհար:

Հյուսիսային բեկոսով կանգնեցրին հինգ զրոշակ, վորոնց թվում նաեւ ամերիկյան մետաքսե զրոշակը, վոր նվիրել եր Պիրին նրա կրնը 15 տարի առաջ: Ստացակույտերի ճեղքում գրվեց մի շիշ, մեջը տոմս, թե բեկոս գլուտի և թե այն մասին, վոր այդ տեղը հայտարարվում և վորպէս Միացյալ Նահանգների տիրապետություն: Բեկոսով Պիրին մնաց 30 ժամ, զբաղվելով դիտողություններ և հաշիվներ անելով:

1909 թ. ապրիլի 7-ին Պիրին սկսեց վերադառնալ՝ պետք եր սառցադաշտերով անցնել մոտավորապէս 750 կմ, շարունակ վոշնչանալու. վտազին յենթարկելով անձը և կատարված աշխատանքների արդունքը: Բայց վերադարձի ճանապարհն անհամեմատ ավելի հեշտ յերեաց. ճանապարհն արդեն ծանոթ եր, ճեղքվածքներ և ջրանցքներ այլեւ չեյին պատահում: Ապրիլի 23-ին Պիրին իր ուղեկիցների հետ, ժամանեց Կոլումբիա հրվանդանը: Ամբողջ ճանապարհորդությունը՝ մինչև բեկո և վերադարձը տեւեց 53 օր:

Վերադարձի ուրախությունը տխրության փոխվեց, յերբ Պիրին լսեց Մարվինի կորուստի մասին, վորին նա շատ եր դնահատում և սիրում:

Հուլիսին «Թուզվելալը» սկսեց հեռանալ Շերիդան հրվանդանից և սեպտեմբերի 31-ին վերադարձաւ Նյու-Յորք: Ամերիկական յերեք հեղինակավոր դիտական ընկերություններ և Վաշինգտոնի ազգային դիտական տեղեւթայի ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովը, ապա Լոնդոնի արքայական աշխարհագրական Ընկերությունը քննելով Պիրինի փաստաթղթերն ու գործիքները հաստատեցին, վոր նա իրոք հասել և հյուսիսային բեկոսին: Նույնը հաստատեց և 1910 թ. Կոնգրեսի կողմից նշանակված հատուկ հանձնաժողովը:



ՀԱՐԱՎԱՑԻՆ ԲԵՎԵՌ

Ոստե Նորգենշեկդ

Հարյուր տարուց քիչ ավել և անցել այն որվանից, ինչ յևլրոպացիք մոտեցան այն խորհրդավոր ցամաքի ափերին, վորի կենտրոնումն և գտնվում հարավային բևեռը: Ջեմս Ռոսսը, վոր գտել և հյուսիսային մագնիսային բևեռը, տասը տարուց հետո յերկու նշանավոր նավերով «Երեբունա» և Տեռոր» (1846 թ. նրանք կորան հյուսիսային բևեռային սառուցներում Ֆրանկլինի դժբախտ եքսպեդիցիայի ժամանակ) անցավ բոլոր ծովերից ամենահարավայինի ափերի յերկարությամբ: Այդ ծովը, ի պատիվ ճանապարհորդի, հետագայում կոչվեց Ռոսսի ծով: Միաժամանակ նա այնտեղ գտավ 4000 մետր բարձրություն ունեցող գործող հրաբուխ, վորն անվանեց «Երեբունա», և մի ուրիշ հանգամ հրաբուխ, վորն անվանեց «Տեռոր»: Այլ ևս նրան չաջողվեց առաջ անցնել. առաջարժմանը խանդարում եր սառցի բարյերը (արգելք), վոր տեղ-տեղ 80 մետր բարձրություն ունեն:

Բավական ուշ դանազան յևլրոպական յերկրներից դիմեցին դեպի հարավային բևեռը, աշխատելով իրար ձեռքից խլել աշխարհի վեցերորդ մասի դյուտաի պատիվը: Այս փորձերում մասնակցություն ունեցին և շվեդները:

«Անտաբեդիկ» շվեդնավը, վոր հին, փորձված կետորսական նավ

և, վոր շատ անգամ և կտրել անցել թե հյուսիսային և թե հարավային կիսագնդերի ծովերը, վոր պտտել և Շպիցբերգենի շուրջը և յորայով անցել Գրենլանդիայի արևելյան ափերի յերկարությամբ, յեղել և Հարավային Սատուցյալ ովկյանոսում։ Նրանով ճանապարհորդել եր Ռատո Նորդենշելդը, յուր ընկերներով, դեպի հարավային բևեռը՝ 1901 թ. աշնանը։ Նալի կապիտանն եր Լարսենը, իսկ եքսպեկիցիային մասնակցողներն խմբում գտնվում էին դոկտոր Անդերսոնը և լեյտենանտ Գուդեն։ Անցնելով Ատլանտյան ովկիանոսը, նալը հասավ Հորն հրվանդանին, վորտեղից 1902 թ. նոր տարի որն ուղևորվեց դեպի հարավ։ Տասն ու անցնելուց հետո եքսպեկիցիան հասավ սառցապատ կղզիներ, իսկ շուտով նալը մոտեցավ և Անտարկտիկայի ցամաքին. նրա սառցային յեղրը, վոր յերևում եր արևմուտքից, բարձր եր «Անտարկտիկայի» կամից։

Ամառը Նորդենշելդը հինգ ընկերներին հետ իջավ մի կղզու վրա, վորը նրանք անվանեցին «Ջյունն Բլուր»։ Այստեղ նրանք՝ փայտեռան շինեցին, վոր բերել էին Շվեդիայից և վերցրին քսան որվա ուտեստի պաշար, մի ժամանակ, վոր նրանք վորոշել էին անցկացնել այդ ամառի կղզում, վորպեսզի հետախուզություններ և հետազոտություններ կատարեն։ Ժամկետը լրանալուց հետո «Անտարկտիկը» պետք և վերադառնար և վերցնեք ճանապարհորդներին։

Վրա հասնող ձմեռը սարսափելի ցրտեր բերեց. ջուրը սառչում եր տանը, բորբ անկյուններում գոյացել էին սառուցի կտորներ, տան պատերը ծածկվել էին բորբոսով, բայց կամպոր անապատականներին այդ այնքան ել չեր ճնշում, վորովհե ու նրանք բաղական շատ գործ ունեին և՛ անից դուրս Բլուրովին ել հանաք բան չեր եքսկուրսիա կատարել դեպի տան մոտ շինած դիտարանը 40⁰ սառնամանիքին, մինչև վոսկրների ծովը թափանցող քամու ժամանակ։ Սառնամանիքից ճաքճքում էին տան դերանները, մանր քարերի կարկուտը ոմբակոծում եր տունը քամու աղպեցության տակ գտնվող կողմից, իսկ մի անգամ ել՝ կատաղի փոթորիկն իր տեղից քշեց ամենախոշոր նավակը և ջարդուխոշոր արեց այն։

Գարնանը և սեպտեմբերին հետախույզներն սկսեցին փոխել և պինդվիներն⁶ վորսալ, վորպեսզի առաջիկա ձմեռվա համար ավելալացնեն ուտեստի պաշարը, իսկ մի ամիս անց, Նորդենշելդը իր ըն-

⁶ Թեռա-թռչուն

կերներէից մեկի հետ դահուկներով եքսկուրսիայի ձեռնարկեց հյուսիսային ուղղութեամբ:

Հեշտ ե պատկերացնել նրանց զարմանքը, յերբ նրանք սառուցի անապատի վրայով բազմոյրյա մեծ ճանապարհներ կտրել անցնելուց և քսան ամսյա մենապլուծյունից հետո հանկարծ հեռվում նկատեցին յերեք սև, իրենց մոտեցող կերպարանք: Սկզբում նրանք այդ կերպարանքները թևատների սեղ ընդունեցին, բայց շուտով ուշադրութեամբ նայելով, տեսան, վոր նրանք մարդիկ են, — յերկար մտախորով, սև ցնցոտիներով: Յեւ դրանք իրենց ընկերներն էլին — Անդերսոնը, Դուգլէն և Նորվեգիացի նավաստի Գունդերսենը: Շուտով ամեն ինչ բացատրվեց: Յերբ «Անտարկտիկ» շոգենավը վերադառնում եր ավելի տաք ծովերից, վորպեսզի Նորդենշելդի և իր ընկերների միջև կնքած պայմանի համաձայն ազատի նրանց Ջյունե Բլրի կամավոր բանտարկութեանից, այդ յերեք հոգին վորոշեցին ասի իջնել Հոսո ծոցում, վորպեսզի այստեղից վտարով հասնեն կղզին: Շոգենավն այնտեղ հասնել չկարողացաւ, վորովհետև սառուցն արգելում եր: Իրենց տրամադրութեան սակ ուտեստի շատ քիչ պաշար ունենալով, նրանք հարկադրված էլին ամբողջ ձմեռն անցկացնել քարաշեն խոճուկ խրճիթում և իրենց պաշարը լրացնել փոկերի ու թևատների մսով: Միայն դարնանը նրանք հնարավորութեան ունեցան շարունակելու ճանապարհորդութեանը դեպի Ջյունե Բլուրը, յերբ բարեհաջող դիպվածը յերկու խմբերին մոտեցրեց իրար: Յերկու խմբերն էլ բարձր և ուրախ տրամադրութեամբ միասին դիմեցին դեպի եքսպեդիցիայի ձմեռանոցը:

Այդ միջոցին Լաբսենը նավի տախտակամածից իջեցնելով Անդերսոնին ու նրա յերկու ընկերներին, փորձ արեց առաջ շարժվել. նա անցավ Պաուլետ կղզու մոտով, վոր ընկած ե Ջյունե Բլրի հյուսիս-արեւելեյան կողմը, ապա թեքվեց դեպի հարավ, բայց շուտով նավը շրջապատվեց սառուցներով: Փոթորիկը հարավից նավը եղմել եր սառուցին, կարծես թե պտուտակներով և նրա հետ միասին քշում եր դեպի հյուսիս: Սառցակույտը ջարդեց «Անտարկտիկայի» ղեկը և վորդնափայտը, և ջուրն սկսեց արագութեամբ ներս լցվել առաջացրած ճեղքվածքներով: Նավորդները հուսահատաբար կռւում էլին, տենդորեն աշխատում ջրհան մեքենաներով: Բայց նրանց ջանքերն ապարդիւն անցան. յերբ սառուցները հեռացան իրարից, շոգենավն արագորեն ջրով լցվեց և իջավ ծովի հատակը: Վերջին բոպելին, սակայն, հաջողվեց ազատել մակույկները, պաշարը և ղենքերը, վայր բերելով սառուցի վրա:

Նախնիները թողնելով քաշելով և մոտեցնելով սառուցի յեզրին, ճանապարհորդները պաշարի մի մասը դարսեցին նրա վրա այն հուսով, զոր հետո կվերցնեն և սառուցի վրա մնացած ծանրոցները։ Նրանց հաջողվեց անվորձ հասնել Պաուլետ կղզին։ Հենց այդ զիշեր սարսափելի փոթորիկ բարձրացավ։ Յեթն ճանապարհորդները գեթ մի ուր ել հապաղեցին, ապա բոլորն ել անկասկած կոչնչանային։ Սառուցի վրա մնացած պարենը, հասկանալի չե, զոր կորավ անփերադարձ կերպով։

Լավ թե վատ, պետք եր տեղավորվել։ Քարից շինեցին մի խրճիթ, ծածկեցին առազաստով և փոկի մորթիներով, և այդպես մի առժամանակ ապրեցին, ամբողջ ութ ամիս անվելով փոկի և թևատների մսով։ Բարեհաջող յեղանակի սպասելով, Լարսենն ու ընկերները գիմեցին գեպի Հուսո ծոցը։ Այստեղ նրանք մի տոմս դտան, վարից խմացան, զոր Անդերսոնը, Դուդեն և Դուդերսենը հեռացել էյին դահուկներով գեպի Չյուան Բլուրը։ Դեպի այնտեղ դիմեց և Լարսենը։ Հանդամանքների հաջող բերումով, նրանց Նուդենշելդի կայանը ժամանելուց մի քանի ժամ առաջ, այնտեղ ժամանեց արգենտինական մի նավ։ Այսպես, եքսպեդիցիայի բոլոր մասնակցողները կրկին միացան և հնարավորություն ստացան իրենց յերկիրը վերադառնալու, — ճիշտ և, առանց «Անտարկտիկայի», ըսյց հորուստ գիտական նյութերով։

ՇԵԿԼՏՈՆ



Շեկլտոն

Այն ժամանակ, յերբ Ոստո Նորդենշելդը յուր «Անտարկտիկա» նավով լողում եր դեպի հարավային բեվեռը, Անգլիան նույնպես մեծ արշավախմբեր եր պատրաստում այնտեղ ուղարկելու: Կապիտան Սկոտտի գլխավորութեամբ գործող այդ եքսպեդիցիայի խմբի ղեկնեցի մեկն ել այն եր, վոր հետագոտիւր այն ծովերն ու ծովափերը, ուր առաջին անգամ այցելել եր Ռոսսը: Սկոտտը խիստ կարևոր գլուտեր արեց «աշխարհի մեկ վեցերորդ, մասի» ամերի մոտ և հարավային բևեռին ավելի մոտեցավ, քան նրա բոլոր նախորդները:

Սկոտտի եքսպեդիցիայի մասնակիցներէց մեկը մի քանի տարի անցնելուց հետո ձեռնարկեց նոր ճանապարհորդութեան՝ դեպի հարավային բևեռը: Դա Շեկլտոնն եր, վորի ճանապարհորդութեանը ղեկը ղեկի Անտարկտիկա կատարված եքսպեդիցիաներէց ամենախոշորն ու ամենանշանավորն ե:

Շեկլտոնը նպատակադրել եր յուր ձմեռային կայանից վորքան հնարավոր և ավելի մոտենալ հարավային բևեռին և 1908 թ. հոկտեմբերի վերջին ճանապարհ ընկավ: Իր հետ նա վերցրեց միայն յերեք ուղեկից: Գնում էին չորս սահնակով, վորոնց լծել էին կարճահասակ, բայց ամբապինդ ձիեր, վոր Շեկլտոնը յուր

ժամանակին ձեռք եր բերել Մանջուրիայից: Իրենց հետ վերցրել էյին չորս ամսվա ուտեստի պաշար:

Յերբ Շեկլտոնը ձյունածածկ սառուցի վրայով առաջ շարժվեց զեպի հարավ, երեքուս հրաբուխի խառնարանից սև ամպեր էյին բարձրանում:

Տեղ-տեղ ձյունը փափուկ եր, տեղ-տեղ ել ծածկված եր սառած կեղևով, վոր դիմակալորում եր սառուցի վրա յեղած մեծ ճեղքվածքները: Կայաններում յերկու վրան կանգնեցրին: Մարդիկ փաթաթվեցին քնելու տոպրակների մեջ, իսկ ձիերը տապճակներով* պաշտպանված՝ քնում էյին կանգնած: Հաճախ ճանապարհորդներն ստիպված էյին կանց առնել կայաններում, սպասել մի քանի որ րուքերի պատճառով, վորոնք անհնար էյին դարձնում հետագա առաջխաղացումը:

Յերբ արեն ամպերի յտեղ թագնվեց, լույսի պակասը դժվարացրեց ճանապարհորդությունը. սովերները չքացան և մի որինակ ձյունե հարթության խորդուրորդություններն ու թերւմները միանգամայն աննկատելի դարձան, այնպես վոր ճանապարհորդները յուրաքանչյուր քայլափոխին վորեւէ փոս կամ անդունդ զլորվելու վտանդին էյին յենթարկում իրենց: Ժամանակ առ ժամանակ ճանապարհորդների ականջին էյին հասնում խուլ հարվածների ձայներ, վորոնք հրանոթները տրաքոցներն էյին հիշեցնում. դրանք կտրտվող սառուցներն էյին, վորոնք պղկվում էյին սառցապաշտերի ծայրերից և թափվում ծովը:


Որովհան 20 — 30 կմ արագությամբ դնալով, Շեկլտոնը մոտենում եր հարավային բևեռին: Ճանապարհորդների այդ փոքրիկ խումբը կորել եր անծայրածիր ձյունե և սառուցի անապատում: Միայն արեմուտքում բարձրանում եր լեռնազագաթները մի շարք՝ անմատչելի սպիտակ պարսպի պես, աշտաբաղները և հրակնատների (բոյնիցա***) անցքերով:

Նոյեմբերի 21-ին դեղակահարեցին մի ձի՝ վերցնելով նրա միսը վորպես պաշար: Ազատված սահնակն ուղղահայաց դիրքով խրեցին ձյան մեջ, վորպես վերադարձի նշան:

Հինգ որից հետո Շեկլտոնը հասավ ամենահարավային կետին, վորին մի ժամանակ հասել եր Սկոտտը: Ճանապարհորդների առաջ

* Ձիու վրա փակիբ:

** Հին զգեստների աշտաբաղները պատերի վրա հրաձգության համար բացված անցքեր:



քարձրանում էյին սև ժայռոտ պատերի պես թեք լեռներ, վորտեղ դեռևս վոտք չեր կոխել մարդը: Յերկու որից հետո սպանեցին և յերկրորդ ձին, իսկ նրանից հետո ստիպված յիղան և դոհել յերրորդը, վորը հրաժարվում էր առաջ գնալ: Կենդանի մնացած միակ ձին մի կերպ քարշ եր տալիս յուր սահնակը, իսկ մյուս սահնակներին լծվել էյին իշենք՝ ճանապարհորդները:

Լեռնաշղթան, վոր սկզբում ձգվում էր ճանապարհորդներից դեպի աջ, մեծ վոլորտներ եր անում դեպի արևելք. բարեբախտաբար նրան կտրում անցնում էր սառցադաշտը, վորով և ողովեցին ճանապարհորդները: Բարձրացան սառցադաշտով և դրանիտյա ժայռերի միջով անցան բարձրության վրայով:

Բարձր լեռներն այժմ շրջապատում էյին ճանապարհորդներին ամեն կողմից: Դավաճան ճեղքվածքները կտրտում էյին սառուցը և առաջ գնալու համար մեծ զգուշություն պահանջում: Անցքերից մեկը նշանավոր դարձավ մի արկածով: Յերեք անգլիացի, սովորականի համաձայն, քաշում էյին բռնավորված սահնակը, իսկ չորրորդը կառավարում էր յերկրորդ սահնակը, վոր քաշում էր ձին: Հանկարծ ձին կարծես խրվեց ձյան մեջ. ճեղքվածքի վրայով ձգված ձյունն կամուրջը փլեց կենդանու ծանրության տակ, և նա գլորվեց ճեղքվածքի մեջ, վորի խորությունը 300 մետրից պակաս չեր: Մարդիկ կռացան փրատակի բացված անցքի վրա, բայց խորքից վոշ մի ձայն չեր լսվում: Բարեբախտաբար ձիու ընկնելու ժամանակ լծափայտը կտրվում է և սահնակը, դեկավարի հետ միասին, ինչ վոր հրաշքով, մնում են վերևում՝ փրատակի հենց յեղրին: Յեթն սահնակը ուտեստի պաշարի հետ միասին ձիու յետևից թռչիւր անդունդը, Շեկլտոնն ստիպված պիտի լիներ հետ դառնալ:

Բայց ճանապարհորդները հաստատամտությամբ շարունակում էյին ճանապարհը, մազլցելով սառցադաշտերի մեջ, ժայռերի վրա: Ծննդյան տոներին ջերմաչափը ցույց եր տալիս 44⁰ զերոյից ցած, վոր ամառվա համար առանձնապես բարձր ջերմաստիճանն է:

Բայց ահա ճանապարհորդներն անցան լեռների այն կողմը, և նրանց առաջ բացվեց ընդարձակ, ձյունով ծածկված սառցադաշտը, վոր աստիճանաբար բարձրանում էր դեպի հարավ: Տիդի բավականաչափ բարձր լինելը սաստիկ պիտացավ եր առաջ բերում:

Այստեղ, վորպիս ճանապարհի նշան, խփեցին ծայրին դրոշակ ամրացրած մի բամբուկե ձող:

1909 թ. հունվարի 1-ին բարձրացավ խիստ ուժեղ ձյունախտան փոթորիկ, վոր անհնար էր դարձնում հետագա առաջխաղացումը:

Հերմաստիճանն իջավ զերոյից 56⁰ ցած: Այդպես յերևաց ամառը հարավային բևեռում:

Հունվարի 9-ին ճանապարհորդներն առանց ծանրոցների և սահակների առաջ շարժվեցին և կանդ առան 8^h 23՝ հարավային լայնության տակ: Մինչև հարավային բևեռը մնում էր ընդամենը 180 կմ, բայց պարենի պակասությունն ստիպեց ճանապարհորդներին զադարեցնել առաջախաղացումը. բևեռին հասնել սխալմամբ հնարավոր էր, բայց հաջող վերադարձի համար այդ դեպքում վոչ մի հույս չկար:

Սառցադաշտի բարձրությունը ծովի մակերևույթից 3000 մետրից ավելի էր: Վերջին կանգառում ճանապարհորդներն անգլիական դրոշակ տնկեցին և թողեցին մի մետաղե արկղիկ, իրենց ճանապարհորդությանը վերաբերող տոմսով:

Մի վերջին հրաժեշտի հայացք դցելով մոտիկ, թեև անհասանելի հարավային բևեռին, ճանապարհորդները յետ դարձան:

Հին հետքերով Շեկլտոնը հաջող կերպով վերադարձավ յուր ձմեռային բնակարանը, իսկ այնտեղից ըլլոր ճանապարհորդները վերադարձան իրենց յերկիրը:

Աշխարհագրական գյուտերի պատմության մեջ Շեկլտոնի եքսպեդիցիան հանդիսանում է ամենավայրեն եջերից մեկը: Մի քանի տարուց հետո նորվեգիացի Ամունդսենը՝ դնալով նույն ճանապարհով, հասավ բևեռին: Այնուամենայնիվ ընդմիջառ Շեկլտոնին և մնում Անտարկտիկան առաջինը նվաճողի փառքը:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԲԵՎԵՌԻ ԳՅՈՒՑԸ



Ռոալդ Ամունդսեն

Այն ժամանակ, յերբ ամերիկացի Պիրին համարյա հասել էր հյուսիսային բևեռին և արդեն մոտ էր իր նպատակին, Նորվեգիայում մի այլ եքսպեդիցիա յեր պատրաստվում նույն նպատակով և հյուսիսային ծովերն ուսումնասիրելու համար, — նշանավոր բևեռային ճանապարհորդ Ռոալդ Ամունդսենի ղեկավարությամբ։ Նա ծնվել է 1872 թ. և դեռևս յերիտասարդ հասակում ցույց էր տվել իրեն վորպես անվեհեր ճանապարհորդ։ 1897 — 98 թթ. յեղել է արկտիկական յերկրներում Ժերլաշի եքսպեդիցիայի հետ։ 1903 թ. «Գիոյա» առաջատանավով, վոր աշխատում էր նավթամոտորով, վեց հոգուց բաղկացած անձնակազմով նա անցավ Ամերիկա մայրցամաքի և Վիրյամ թագավորի ու Վիկտորիայի կղզիների միջև ընկած հյուսիս-արևմտյան ճանապարհով և այդ շրջանում 19 ամսվա ընթացքում ուսումնասիրեց հյուսիսային մագնիսային բևեռը։ Ամունդսենի յերրորդ եքսպեդիցիայի ծրագիրը դեպի հյուսիս արդեն մշակված էր, դրամական անհրաժեշտ միջոցներն էլ հատկացված, յերբ 1909 թ. սեպտեմբերին լուր ստացվեց, վոր ամերիկացի Պիրին գտել է հյուսիսային բևեռը։ Այս հանգամանքը հանկարծ փոխեց Ամունդսենի մտադրությունը և հյուսիսային բևեռի փոխարեն նա սկսեց մտածել հարավային բևեռը դառնել ու ծրագրի մասին։

Այդ խիղախ ծրագրի իրագործման համար հոգն արդեն պատրաստ էր շնորհիվ նախորդ եքսպեդիցիաների, գլխավորապես Շեկլտոնի նշանավոր եքսպեդիցիայի, վորը 1909 թ. հունվարի 9-ին հասել էր 88° 23' հար. լայն. կարելի յեր ոգտվել այդ եքսպեդիցիաների փորձից, խուսափել նրանց սխալներից և վերցնել այն քողը,

վորք, Ամուռդսենի ասելով, դեռևս մնում էր խորհրդավոր Անտարկտիկայի բարձունքներում:

Իր ծրագրի մասին Ամուռդսենը հաղորդեց յուր յեղբորն ու յերկնին՝ «Ֆրամ» նավի ավագ սպային: 1910 թ. ոգոստոսի 9-ին յերկնյան «Ֆրամը» թողեց Նորվեգիայի ափերը և դիմեց դեպի իր նպատակը, վոր գտնվում էր 3000 կմ հեռավորության վրա, բայց ամբողջ եկիպաժից չորս հոգի միայն գիտեյին այդ նպատակի մասին, վորոնք շատ ելյին հուզվում և սպասում էին այն մոմենտին, յերբ այդ ամենքին հայտնի կդառնար Մի ամսից հետո «Ֆրամը» ժամանեց Մադեյրա կղզին, վորտեղ լրացրին սլաշարը: Սեպտեմբերի 9-ին, յերբ ամեն ինչ պատրաստ էր, նավորդները կանչվեցին տախտակամած և Ամուռդսենը հայտարարեց ճանապարհորդության նպատակի մասին: Բոլորն էլ սիրով համաձայնեցին, նամակ գրեցին յուրաքանչեքին կատարված փոփոխության մասին և փոստը հանձնեցին Ամուռդսենի յեղբորը, վոր տանում էր Թրիստիանա:

«Ֆրամ»-ը պտտվեց Աթրիկայի շուրջը և Հնդկական ովկիանոսով ուղղվեց դեպի հարավ-արևելք: Բարեհաջող քամիները քշում էին նավը դեպի նպատակը, և դեկտեմբերի 30-ին նա գտնվում էր արդեն 170° արևելեյան յերկայնության և 60° հարավային լայնության տակ, այսինքն Խաղաղ ովկիանոսում (Նոր-Զելանդիայից դեպի հարավ): Այստեղ վերցրին հարավային ուղղություն այն հաշվով, վոր կտրեն անցնեն 65° հար. լայն. և 175° արևել. յերկ. տակ գտնվող տարածությունը և, վորքան հնարավոր և, արագ անցնեն սառցադաշտերի շերտը, վոր փակում էր հյուսիսից Ռոսսի ծովը:

Լողացող սառույցները գտին, վոր յերեկմն մի քանի շաբաթ յետ էր պահում նախկին ծովադնացիներին, անցան Հափադանց արագ և հաջող կերպով, և չորս ուրում «Ֆրամը» կտրեց-անցավ սառույցներից սպաս Ռոսսի ծովը և մոտեցավ սառցադաշտի պարսպին: Անտարկտիկան, ինչպես գլխարկ, ծածկված և ձյունից դոյացած սառցակույտերով, վորոնց տակից տեղ-տեղ միայն դուրս են գալիս բարձր լեռներ: Այդ սառցակույտերի սառցն կտրոնները ծովի ափերի մոտ միանում և կազմում են սառցադաշտի այսպես կոչված ուղղաձիգ պատերը: Նրա մի մասն ընկած և ցամաքի վրա, իսկ մյուսն իջնում և ծովը, տալով սառցն լեռներին տափակ դադաթով յուրահատուկ ձևեր, վորոնք տարվում են դեպի հյուսիս:

Սառցն հասա պարսպի յերկարությամբ կատարած չորս ուրա ճանապարհորդությունից հետո «Ֆրամը» 1911 թ. հունվարի 12-ին

մտալ Կետի ծովախորշը ($78^{\circ}41'$ հար. լայն.), վորտեղից Ամուռ-դսենի նախորդները գտել եյին սառցադաշտին մերձենալու տեղը, և հենց այդտեղ ել խարխախ ձգեց:

Յնդանակը պարզ ու խաղաղ էր, արևը լուսավորում էր պայծառ և ողի ճերմությունն զդացվում էր նույնիսկ այս խստաշունչ սառցային դոտում: Բայց և այնպես, նա անկենդան չէր, սառցի վրա ամեն տեղ յերևում եյին դանազան ցեղի փոկեր, ջրից բարձրանում էր թևատներ յերամ, վորոնք առանց յերկրուղի մոտենում եյին մարդկանց:

Ափից վրէ շատ հեռու, այնտեղ, վորտեղ յենթադրվում էր, վոր սառուցների տակ ամուր հող պետք է լինի, դրվեց Նորվեգիայից բերված պատրաստի տունը, շենքեր շինվեցին թե՛ շների և թե՛ ուտեստի պաշարի ու վառելանյութի համար: Այդ գլխավոր ճամբարը կոչվեց «Յրամխեյմ»: Նավի դատարկումն ու ճամբարի կազմակերպումն առաջ էր տարվում մեծ յեռանդով և հեշտանում էր նրանով, վոր ամբողջ ժամանակ լավ, ամառային յեղանակ էր և սառնամանիքը 15° — 20° -ից չէր բարձրանում: Բավական դժվար յեղալ շներին լծվելուն վարժեցնելը, վոր առաջին պահերին կոմի-կական միջադեպերով էր վերջանում:

Փետրվարի 4-ին «Յամի» կողքին խարխախ ձգեց կապիտան Սկոտտի «Տեբբա Նովա» նավը, լեյտենանտ Կեմբելի հրամանատարությամբ, վոր հետադոտում էր Գեորգ VII-բ թագավորի յերկիրը: Տեղի ունեցան փոխայցելություններ և հյուրասիրություններ, բայց, իհարկե, այս անակնկալ հանդիպումը շատ էր անհանդիստ անում Ամուռդսենին:

Փետրվարի 10-ին «Յրամը» հեռացավ կապիտան Նիլսոնի հրամանատարությամբ այն հաշվով, վոր մի տարուց հետո վերադառնա Կետի ծովախորշը:

Ամուռդսենը յուր լինասունյոթ ընկերների հետ մնաց ափին և սկսեց առաջ շարժվել դեպի հարավ, պարենի պահեստներ շինելու համար: Մինչև ձմռան դալը յերեք այդպիսի պահեստներ շինվեցին 80° , 81° և 82° հար. լայն. տակ: Ամուռդսենը վորոշեց դնալ դեպի բևեռ ամենակարճ դժով, այսինքն Կետի ծովախորշի միջուրեյականով: Դրա համար առաջխաղացման կարգը խիստ վորոշակի էր դրված: Մեկը դնում էր ամենքից առաջ դահուկներով, վորպեսզի թե՛ ուղղությունը ցույց տա և թե՛ խրախուսե շներին, նրանց յատելից ել յերկուսը սահնակներով, և կողմնացույցներով, իսկ ամենից վերջը Ամուռդսենը կողմնացույցով և հաշվեցույցով

վոր նշումն և անցած ճանապարհի յերկարությունը: Յուրաքանչյուր 500 մետրի վրա դրվում ևր նշանացույց, սկզբում բամբուկե ձող դրոշակիւններով, իսկ յերբ նրանք վերջացան՝ դատարկ արկղեր, և վերջապես չորացրած ցողուններ, վոր խրում ևյին ձյան մեջ:

Ուղիղ գծով գնալը հեշտ գործ ևր թվում, սակայն յերևում և, վոր բաժանան գծվար և միապադաղ ձյունն հարթության վրա, հասկապես յերբ ամբողջ շրջակայքը պատում և մառախուղը: Ամենից գծվարը գլխավոր ուղեցույցի գործն և, վորը գնում և առաջընթաց հետախույզից հետո, վոր վազում և դահուկներով: Գլխավոր ուղեցույցը բոլոր ճանապարհորդությունների ժամանակ Գեյմեր խանսենն ևր:

Անցած տարածության վրա Սաոյադաշտի մակերևույթը ներկայացնում ևր ալիքաձև հարթություն, վորի վրա յերբեմն միայն պատահում ևյին վտանգավոր ձեղքվածքներ: Յեղանակը մեղմ ու միակերպ ևր և միայն մեկ անգամ ջերմությունն իջավ 40°-ի:

Ձմեռը մտանում ևր: Ապրիլի 22-ին վերջին անգամ յերևաց արևը և մեկ ևլ հայտնվեց միայն չորս ամսից հետո:

Երսպեղիցիան ձմեռն անցկացրեց հարմարավոր «Ֆրամսեյ» մուռն՝ յեռանդով աշխատելով հանդերձանքի վերանորոգման վրա, գրեական աշխատանքներ և ողերևութարանական գիտողություններ կատարելով:

Ձմեռը դաժան ևր. ամբողջ հինգ ամսիս ընթացքում ողի բարեխառնությունը տատանվում ևր սառնամանիքի 50° — 60°-ի միջև, բայց ձյուն քիչ յեկավ, չնայած չստեղծ ծովի մոտիկությանը: Յերկնքի բոլոր ուղղությունների վրա ևլ նկատվում ևր բևեռային փայլ:

Ձմեռը հաջող անցավ: Ողոտտութի 24-ին յերևաց արևը. ամենքն ևլ առույզ ու առողջ ևյին թե հողեպես և թե ֆիզիկապես ու պատրաստ ևյին նորից գնալու դեպի առաջադրած նպատակը:

Սեպտեմբերին 8 հոգի 1 սահնակով, 30 շներով և պարենի պաշարով դուրս յեկան յեռամյա ճանապարհորդության, բայց բարեխառնությունը հանկարծ իջավ մինչև 50° — 60°-ի, շներն սկսեցին նիհարել և տանջվել ցրտից և հար. լայն. 80°-ի ասեղ գտնվող առաջին ճամբարից եքսպեդիցիան յետ դարձավ, վորոշելով սպասել դարնան գալուն:

Հոկտեմբերին դարունը յեկավ, բարեխառնությունը պահպանվում ևր 20° — 30°-ի միջև, սկսեցին յերևալ փոկեր և թռչուններ:

Ճանապարհորդության պլանը փոխվեց: Հոկտեմբերի 20-ին

5 մարդուց, 52 շնից և 4 սահնակից բաղկացած մի խումբը չորս ամսվա պաշարով առաջ շարժվեց դեպի բևեռը, իսկ մնացած յե-
րեքը՝ Պրեստրուդի դեկավարությամբ, ուղևորվեցին դեպի արևելք՝
Նդուարդ VII-ի յերկիրը, վորն անցած տարին չեյին կարողացել
հետադոտել անգլիացիները:

Ճանապարհի առաջին, արդեն ծանոթ մասը վերոշված եր անց-
նել առանց շտապելու, վորպեսզի շները չհոգնեն.—որական 20—
30 կիլոմետր. բայց շներն ավելի շատ եյին գնում. 80-րդ դուգա-
հեռականից Ամունդսենի խումբն սկսեց ձյունե աշտարակներ շի-
նել, վորպեսզի վերադարձին ճանապարհը կարողանան դառնել:
Մինչև 83⁰.ը ճանապարհորդությունը խիստ մեծ բավականու-
թյուն եր պատճառում մարդկանց. թե՛ ճանապարհը և թե՛ յեղա-
նակը կատարելապես նպաստավոր եյին:

82⁰-ի վրա շներին կերակրեցին խիստ կուշտ, սակայն դա
վերջին անգամը յեղավ:

Պարզվեց, վոր Ռոսսի սառցադաշտը միանում և յերկու լեռնա-
շղթաների հետ, վորոնցից մեկը գալիս և Հարավային Վիկտորիա-
յից, իսկ մյուսը կազմում և Նդուարդ VII-ի Յերկրի շարունակու-
թյունը: Նոյեմբերի 17-ին եքսպեդիցիան կանգ առավ 85⁰ դուգա-
հեռականի վրա մի լեռնային զանգվածի ստորոտում և այնտեղ
թողեց 30 որվա պաշար, վերցնելով իր հետ 60 որվա պաշար միայն:

Սկսվում եր ճանապարհի ամենադժվար մասը. զանգվածն ան-
մատչելի յեր թվում: Նրա զաղաթները գտնվում եյին ավելից
600—3000 մետր բարձրության վրա. ավելի հեռուն՝ հարավում
յերևում եյին ուրիշ լեռներ, ըստ յերևութին ավելի քան 4500 մ
բարձրությամբ: Զանգվածի վրայով անցնելը տեևց չորս որ:
Պումբը չեր գնում, այլ ավելի ճիշտ մագլցում եր լեռների և սառ-
ցաբանների վրա, վորոնք տեղ-տեղ այնպես թեք եյին, վոր
հնարավոր չեր ոգտագործել դահուկները, ուստի հարց յեղավ
սահնակներին լծել 20 շուն: Ճանապարհն ավելի դժվարանցանելի
դարձավ: Ստիպված յեղան բազմաթիվ պտույտներ կատարել
անդունդներից և անթիվ-անհամար ճեղքվածքներից խուսափելու
համար: Իրավ ե, ճեղքվածքների մեծ մասը ձյունով լցված (եր,
սակայն այդ ձյունե կամուրջների ամբողջյանը վատահել չեր կա-
րելի: Ծները հրաշքներ եյին գործում. հետադաշում 700 կմ անց-
նելով, նրանք մեկ որում անցան 35 կմ 1700 մ բարձրության
վրա: Եքսպեդիցիան այդ զանգվածի վրայով Սառցադաշտից ան-
ցավ մի բարձրավանդակի վրա, վոր գտնվում եր յերկրի ներքում

և կանդ առաջ 2260 մ բարձրութեան վրա շինած նամբարում
և այստեղ անցկացրեց չորս որ վատադուռն պայմաններում:

Այստեղ 42 շներեց սպանեցին 24-ը, մնացին միայն 18-ը, վո-
րոնք կազդուրվեցին և կշտացան սպանված ընկերներին մտով,
իրենք եքսպեդիցիայի անդամները մեծ հաճույքով նաշակեցին շուն
մսից պատրաստած կոտլետները:

Մնացած բուքը չեք դադարում, այնուամենայնիվ նրանք առաջ
շարժվեցին և 86° 21' վրա կանդ առան Սատանայի սառցարանի
ստորոտում՝ ծովի մակերևույթից 2240 մ բարձրութեան վրա:

Այստեղից բացվում եր մի հրաշալի տեսարան — արևելյան
լեռնաշղթաներն իրենց 3—4 հազար մետր բարձրութուն ունեցող
դադաթներով, վորոնք մերթ պայծառ լուսավորվում եյին արևի
նստադայթներով, մերթ ծածկվում եյին մառախուղով: Վերելքը
սառցարանի վրա տեսց 3 որ և շատ դժվար ու վտանգավոր եր:
Սառցարանը ծածկված եր անթիվ-անհամար ճեղքվածքներով և
խոռոչներով. այդ ճեղքվածքների վրայով ձգված սառցե կամուրջ-
ները հաճախ կտրտվում եյին նանապարհորդների վտռքերի տակ:
Ձգացվում եր, վոր սառցե մարերևույթի տակ տեղ-տեղ գտնվում
են դատարկութուններ: Ճանապարհորդների կյանքը յերբեմն մա-
ղից եր կախված լինում: Մի անգամ մի մարդ և յերկու շուն զլոր-
վեցին, բայց հաջողութեամբ դուրս յեկան: Վերելքի ամենաբարձր
կետը 3280 մ բարձրութեան ունեք ծովի մակերևույթից, այնու-
հետե սկսվում եր վարելքը և ահա եքսպեդիցիայի առաջ բաց-
վեց մի հարթ բարձրավանդակ, տեղ-տեղ փոքրիկ ճեղքվածքներով
ծածկված: Ճանապարհը դեպի բեկու բաց եր, յեղանակն ել պարզել
եր և կարելի յեր տատարաշխական գիտողութուններ անել:

Եքսպեդիցիան արագորեն առաջ եր շարժվում դեպի հարավ
բարձրվին հարթ դաշտավայրով: Դեկտեմբերի 8-ին անցան հար-
լայն. 88°23'-ը, վորին հասել եր Շեկլտոնը: Դա հանդիսավոր
բույն յեր: Ամուսդսենի աչքերում հուզմունքից և ուրախութեան-
նից արցունքներ յերեացին: Բարձրացվեց նորվեգիական դրոշակը
և եքսպեդիցիայի անդամները ջերմագին շնորհավորեցին իրար:
Հարավային լայնութեան 88°25' ի վրա շինեցին վերջին, տա-
ներորդ պարենի պահեստը, խնամքով պատրաստեցին առանձին
նշաններ, փորպնսդի կարողանային գտնել այն: Ամուսդսենը արա-
դորեն առաջ եր շարժվում և 1911 թ. դեկտ. 14-ին հասավ հա-
րավային բեկուն:

Նպատակին հասել եյին: Հինգ նորվեգիացի՝ Ամուսդսենը, Վիս-

պիլը, Բիաալանդը,^{*} խառնակներ և խառնակներ-կանգնել էյին այնտեղ, վերտեղ մինչև այժմ վոչ մի մարդ չի յեղել, յերկրագնդին այն կետի մոտ, վորն այնպես յերկար ժամանակ դրավում եր հանդուգն հետազոտողներին: Իրար ձեռք սեղմելով, այդ հինգ մարդիկ միասին ամրացրին նորվեգիական դրոշակը: Շուրջը տարածվում եր սարահարթի միապաղաղ ձյունն հարթութունը, վորն անվանվեց Գրասկոն VII թագավորի Յերկիր: Այդ որվա առավոտը պարզ ու խաղաղ եր, ողի բարեխառնութունը 23⁰, բայց հետո սկսեց փչել թեթև հարավ-արևելյան քամին, և յերկինքը սքողվեց սև ամպերով, վորոնց միջից մերթ Ընդ մերթ դուրս եր նայում արևը:

Հրաշալի յեղանակին Ամունդսենը յերկու որ նվիրեց աստղաբաշխական դիտողութուններին, կատարելով բևեռային կետին այնքան մոտիկ, վորքան այդ հնարաժող եր: Սեկստանտի և արհեստական հորիզոնի ողնությամբ բևեռի շառավիղը վորոշվեց 8 կիլոմետր: Բևեռի վրա կանգնեցրին մի փոքրիկ վրան, շրջապատված նորվեգիական դրոշակներով, իսկ վրանի վրա բարձրացրին նորվեգիական դրոշը և «Ֆրամ» վիմպելը^{*}:

Այդտեղ Ամունդսենը թողեց մի փոքրիկ քսակ և թաղավորի անունով հաշվետվութուն, մի տոմս Սկոտտի համար, աստղաբաշխական պարագաներ և հիպսոմետր, վորոքերի համար յեղջերուների մորթուց կարած տոպրակներ և մի քանի թևնոցներ:


Դեկտեմբերի 17-ին Ամունդսենը բռնեց վերադարձի ճանապարհը: 1912 թ. հունվարի սկզբին հքսպեդիցիան ժամանեց Ֆրամսեյմ յերկու սահնակով և 11 շներով, բոլորն ելլավ վիճակում: «Ֆրամ» ուղացավ հակառակ փչող քամիների պատճառով և ժամանեց Կետի ծովախորշը հունվարի 9 ին: Մինչև նրա հեռանալը Ֆրամսեյմի շրջակայքում յերևաց ճապոնական եքսպեդիցիան:

Հունվարի 23-ին Ամունդսենը «Ֆրամ» նավով ուղևորվեց դեպի տուն:

Մի ամսից հետո հարավային բևեռ ժամանեց անգլիացի Սկոտտը (1912 թ. հունվարի 18-ին):

Թեպետ Ամունդսենին հաջողվեց Սկոտտից առաջ անցնել, բայց հարավային բևեռի գյուտի պատիվը նա պետք և կիսի Շեկլտոնի և Սկոտտի հետ:

^{*} Ժապավենածեղ գրոշակ, վոր ծավառավի սկզբում բարձրացնում են, իսկ վերջում՝ իջեցնում:



ՄԱՐԿՈ-ՊՈԼՈ

Մարկո — Պոլո

1260 թվին վենետիկից Կ. Պոլիս ժամանեցին յերկու վաճառականներ՝ նրանք կոչվում էին Նիկոլա և Մաֆեո Պոլո։ Ասիայի հետ նոր առևտրական կապեր հաստատելու բռնեց ցանկությամբ լցված, նրանք վճռեցին նախ գնալ Ղրիմ, իսկ այնտեղից Վոլգայի վրայով Բուխարա, ապա Սուրխա-խան մեծի աշխատը։ Այս հեռավոր յերկրների մասին այն ժամանակվա Յևփրոպայում գրեթե չէին չէր իմացին։

Մեծ խանը, վոր իր կյանքում գնդեց վոչ մի յեվրոպացի չէր տեսել, սիրալիք կերպով ընդունեց յերկու վենետիկցիներին և մեծ հետաքրքրությամբ հարց ու փորձ արեց նրանց՝ իրենց հայրենիքի հրաշալիքների մասին։

Նրանց պատմածներն ազդեցության տակ նա հանձնեց նրանց մի նամակ՝ Հռոմի պապին հանձնելու, վորի մեջ խնդրում եր նրանք արեկեք ուղարկել հարյուր գիտնական միսիոներներ՝ տափաստանի վայրենի ցեղերին լուսավորելու համար։

Յերբ վենետիկցիներն իննամյա բացակայությունից հետո վերադարձան հայրենիք, ապալն արդեն մեռած եր։ Յերկու տարի իդուր սպասելով նոր պապի ընտրության և չուզենալով խանի աչքում խաբերա յերևալ, նրանք յերկրորդ անգամ ուղեվորվեցին արեկեք, իրենց հետ վերցնելով Նիկոլայի 15 տարեկան վորդուն՝ Մարկո Պոլոյին։

Ճանապարհորդները յերեքը միասին ուղևորվեցին Սիրիայի վրայով դեպի Մոսուլ, վորի մոտ եյին գտնվում յերբեմնի հռչակավոր Նինվեյի ավերակները, իսկ այստեղից Բաղդադ Գորմուս քաղաքը, վոր գտնվում է Պարսից Մոցը Արաբական ծովի հետ միացնող մի նեղ նեղուցի վրա։ Հետո նրանք ուղվեցին դեպի հյուսիս, անցան ամբողջ Պարսկաստանն ու Աղվանստանը, Ամու-Դարյա գետը և բարձրացան Պամիր, — մի ճանապարհ, վորով յեվրոպացիք անցան վեց հարյուր տարուց հետո միայն։ Նրանց հետագա ճանապարհն ընկած էր Յարկենդի, Սոթանի և Լոռ-Նոորի վրայով, Գորի անապատի միջով, դեպի Զինաստան։

Մի քանի տարի թափառելուց հետո, վերջապես 1275 թվին հասան արևելյան Մոնղոլիայի մեծ խանի արքունիքը։

Մարկո Պոլոն շատ դուր յեկավ Սուրբա-խանին, մանավանդ, վոր պատանին կարգալ և խոսել գիտեր արևելյան մի քանի լեզուներով, և Սուրբա-խանն առաջարկեց նրան ծառայության մրտնել իր մոտ։ Մարկո Պոլոն համաձայնեց։

Սանի հանձնարարությամբ Մարկոն ամենից առաջ յեղավ հյուսիսային և արևմտյան Զինաստանում, իսկ հետո նրա վստահութունը ձեռք բերելով, գնաց Հնդկաստան, դեպի Տիբեաի սահմանները և նույնիսկ մի մեծ քաղաքում վարեց նահանգապետի պաշտոնը։

Մարկո Պոլոն պատմում է, իմիջի այլոց, արևելյան տիրակալի ժամանցի մի քանի մանրամասնությունները, որինակ՝ նրա վորսի մասին։ Սանը տեղավորվում է պատգարակում, վորը նման է մի տանիքավոր փոքրիկ սենյակի։ Պատգարակը հաստատված է հորս փղերի թիկունքի վրա։ Պատգարակի դրսի պատերը դարգարված են յոսկուց կռած թիթեղներով, իսկ ներսից՝ վազրի մորթիներով։ Սանի կողքին տեղավորված են տասներկու զորսորդական բաղնիք։ Ժամանակ առ ժամանակ պատգարակը շրջապատող շքախմբից մեկը ձայն է տալիս. — «Թագավոր, կռուներե՞ք... Այդ ժամանակ թագավորը բաց է տնում վրանի քղանցքը և բաց է թողնում բաղնիքից մեկին՝ փետրավոր վորսի վրա։ Սանը շատ է սիրում սպորտի այդ տեսակը։ Հետո վորսին բոլոր մասնակցողները վերադառնում են ճամբար, վոր բաղկացած է հազարավոր վրաններից։ Թագավորի սեփական վրանն այնքան մեծ է, վոր նրա մեջ կարող է տեղավորվել հազար մարդ. մեկ ուրիշ վրան հատկացված է դադունի խորհրդակցություններին, իսկ յերբորքը ծառայում է զորպես ննջարան։ Վրանները հաստատված են ձո-

դերի վրա, դրսից ու ներսից պատած են կաշիններով և մորթիններով: Մարկո Պոլոն հավասարացնում էր, վոր վրաններն այնպես էյին դարդարված, վոր հագիվ թե վորևե թաղավոր իլիճակի լինելու և ձեռք բերել այդպիսի վրան:

Թաղավորի սեղանին հրավիրվում են ամենաանվանի հյուերերը: Նրանց բերանն ու քիթը կապում են վոսկեթել բանվածքով ասեղնադործած մետաքսե թաշկինակներով, վորպեսզի հյուերերի շնչառությունը չփչացնի խորտիկների և խմիչքների համն ու հոտը: Հաշի ժամանակ անընդհատ նվագում է յերաժշտախումբը, իսկ ներկա յեղողներն ընկնում են ծնկների վրա:

Մայրաքաղաքն այցելող վաճառականները, հատկապես ներսիք, վորոնք իրենց հետ վոսկե կամ արծաթե իրեր և այլ թանկարժեք ապրանքներ են բերում, ուրիշ վոչ վոքի ծախել չեն կարող, բացի կայսրից: Յեվ Մարկո Պոլոն բոլորովին զարմանալի չի համարում, վոր Ձինաստանի իշխանավորը յուր կարծիքով աշխարհի ամենահարուստ թաղավորն է: Գնելով այնտեղ բերվող բոլոր թանկարժեք իրերը, նա վճարում է թղթադրամ, վորը կարող է առանց դժվարության պատրաստել ցանկացած քանակութեամբ:

Մարկո Պոլոն հոր և հորեղբոր հետ յերկար տարինեք ապրեց Կինարունի թաղավորութեան մեջ, այնպես վոր, շնորհիվ վաճառականական ընդունակութեանն, նրանք ահազին կարողութեուն կարողացան ձեռք բերել Բայց կայսրը, վոր նրանց հովանավորում էր, արդեն ծերացել էր, և Յեվրոպայի պանդուխտները սկըսել էյին յերկյուղ կրել, վոր նրա մահից հետո իրենց դուրթյունը կարող է վտանգվել: Նրանք սկսեցին ավելի հաճախ մտածել հայրենիք վերադառնալու մասին, բայց ամեն անգամ, հենց վոր զրույց էր բացվում զրա շուրջը, Խուբկա-խանը ձգձգում էր հարցի վճիռը, թախանձելով և համոզելով նրանց միաժամանակ ևս մնալ իր մոտ:

Բախտը, սակայն, ուղարկեց մի զեպք, վոր ողնեց նրանց՝ իրականացնելու իրենց ցնորքը: Հեռավոր Պարսկաստանից Խուբկա-խանի մոտ յեկավ մի զեպանություն, վոր ուղարկված էր յուր ազգական պարսից խանի կողմից. վոր այն ժամանակ Պարսկաստանի կառավարիչն էր: Պարսից թաղավորը զրանից քիչ առաջ զրկվել էր կնոջից, վորը մահից առաջ ցանկութեուն էր հայտնել, վոր ամուսինը կին առնել իր տոհմին պատկանող վորևե կնոջ: Գնապանութեան միասխան էր, — հեռավոր արևելքից բե-

րել պարսից խանի համար նրա ազգականուհիներէից մեկին վորպէս կ'էին: Խուբելա-խանը հաճուցեով ընդառաջեց յուր ազգականի խնդրին, վորի համար և անմիջապէս ընտրեցին մի յերիտասարդ պրինցուհի: Նկատի ունենալով պրինցուհու յերիտասարդ լինելը, — վորի համար Պեկինից մինչև Թավրիզ — 7000 կիլոմետր ճանապարհը դժվար կ'էինք անցնել, — դեսպանները վորոշեցին վերադառնալ իրենց յերկիրը վոչ թե ցամաքային, այլ ծովային ճանապարհով: Պեկինում պարսից դեսպանները մի քանի որում կարողացան ծանոթանալ և մտերմանալ վենետիկցի պաշտօնխոտների հետ և թախանձեցին նրանց գնալ իրենց հետ միասին: Նրանք առանձնապէս մեծ հույս ունեյին Մարկո Պոլոյի վրա, վորպէս ողտակար ուղեկցի, վորը դրանից առաջ յեղել եր' Հնդկաստանում: Խուբելա-խանը ափսոսանքով համաձայնվեց, և 1292 թ. դեսպանությունը, յերեք վենետիկցիների ուղեկցութեամբ, դուրս յեկավ Զինաստանից ծովային ճանապարհով:

Ճանապարհին նրանք շատ դժբախտ պատահարների և ձախորդությունների հանդիպեցին: Սամատրա կղզու վրա և Հնդկաստանում նրանք ստիպված յեղան քաղական կանգ առնել: Դեսպանութեան յերեք անդամներից յերկուսը ճանապարհին մեռան, այնուամենայնիվ պրինցուհին իր վենետիկցի ուղեկիցների հետ հաջող կերպով հասավ Պարսկաստան: Պարսկաստանի Թազափորն արդեն մեռած եր, և պրինցուհին ստիպված ամուսնացավ նրա ազգականի հետ, իսկ վենետիկցիները, կատարելով իրենց միասին, վճռեցին վերադառնալ հայրենիք: Թավրիզի, Տրապիզոնի, Բոսֆորի և Կ.-Պոլսի վրայով նրանք վերջապէս 1295 թվին 24 տարվա բացակայութեանից հետո ժամանեցին իրենց հայրենի քաղաքը:

Պոլոների ազգականներն ու բարեկամները վենետիկում վաղուց արդեն մեռած էյին համարում նրանց, իսկ նրանք իրենք դրեթ ըտրըովին մոռացել էյին իրենց մայրենի լեզուն և հայտնվեցին հայրենի քաղաքում ասիական, հնամաշ շորերով: Դժվար չե գուշակել, վոր ազգականները չճանաչեցին նրանց և, անվստահութեամբ վերաբերվելով իրենց արկածների մասին արած նրանց պատմութեաններին, մերժեցին նրանց հյուրընկալել: Հարազատներից մերժված ճանապարհորդները կանգ առան մի օտարի տան և փառահեղ խնջույք սարքեցին, վորին հրավիրեցին և իրենց ազգականներին: Յիւր հյուրերը քաղմեցին սեղանի շուրջը, բոլոր յերեք տանտերերն ել դուրս յեկան նրանց մօտ, թանկապէս

մուգ կարմիր դույնի մետաքսից կարած յերկար զգեստներով։ Հետո ծառաները ֆուր բերին լվացվելու համար և տերերը հանեցին իրենց վրայի զգեստները և հաղան ասիական ամենամուգը կտորից կարած թիկնոցներ, իսկ մետաքսե զգեստները հենց այդ տեղ տեղն ու տեղ կտրտեցին և վորպես ընծա տվին իրենց ծառաներին, ապա ներկայացան թավշյա զգեստներով և այդ զգեստների հետ նրանք վերջիվերջո նույն ձևով վարվեցին, ինչպես նախկինների հետ։

Յերբ ճաշը վերջացավ և ծառաները սեղանի վրայից հավաքեցին ամանեղենն ու կերակուրների մնացորդները, Մարկո Պոլոն հանեց հին բաձկոնները, վորոնցով նրանք ժամանել էին քաղաք և սկսեց թափ տալ։

Անդանի վրա մեկը մյուսի յետևից սկսեցին թափվել թանկագին քարեր, — սուտակներ, շափյուղաներ, արմատներ... Ջինաստանից հեռանալով, նրանք ծախել էին իրենց ահագին կարողությունը և նրա փոխարեն ձեռք բերել թանկագին քարեր, վոր անհամեմատ ավելի հեշտ եր այդ ձևով բերել, առանց կասկած հարուցելու։ Այս թանկարժեք իրերը, ապահովության համար, նրանք կարել էին իրենց համեստ քաճկոնների մեջ։

Հյուրերի զարմանքին չափ ու սահման չկար։ Այժմ ամենքն առանց տարակուսանքի ճանաչեցին, վոր յեկած ոտաբերկացիներն իրոք հենց նույն Պոլոներն էին, վորոնք անհետ կորած էին համարվում 24 տարի սրանից առաջ։

Պոլոների տարորինակ արկածների և անհաշիվ հարստությունների մասին լուրը տարածվեց քաղաքում։ Ամեն մեկն շտապում եր ներկայանալ յերջանիկներին և արժանանալ նրանց վստահությանը։ Մարկո Պոլոն զարձավ ուշադրության կենտրոն։ Նրանց պատմությունները բերանից բերան էին անցնում։ Այդ պատմություններն այնքան անհավանական էին, վոր նրանց յերբեք չէին հավատա, յեթե նրանք իլյուստրացիայի չենթարկվէին զրամահան հսկայական գումարներով, վոր նա վատնում եր աջ ու ձախ Հայրենակիցները անվանեցին նրան „Марко Миллиони“։

Այդ միջոցին Իսապիայի խոշոր առևտրական հանրապետությունների՝ Վենետիկի, Ջենովայի և Պիզայի մեջ գոյություն ունեւ իշխանություն՝ մրցակցության հոգի վրա։ 1298 թվին ջենովացիները մի մեծ նավատորմից կազմեցին, վորը վենետիկցիների՝ Ադրիատիկ ծովի ափերին՝ Դարմացիայում ունեցած տիրապետություններում մեծ ավերապործություններ գործեց։ Այստեղ

ջենովացիները և վենետիկցիները նավատորմիղների միջև ընդհարում առաջացավ, վերջիններին նավերից մեկի հրամանատարներ Մարկո Պոլոն:

Վենետիկցիները պարտութուն կրեցին, յոթ հազար վենետիկցիներ գերի ընկան և հանդիսավոր կերպով բերվեցին Ջենովա, վորտեղ և բանտարկվեցին: Գերիների թվումն էր և Մարկո Պոլոն:

Բանտում Մարկո Պոլոն բավական մտերմացավ յուր բախտակից գերտնական գրող պիղացի Ռուստինիանոյի հետ: Նա ֆրանսերեն լեզվով գրեց Պոլոյի հաղորդած «Վենետիկցու պատմությունները՝ Ասիայում ունեցած իր արկածների մասին»: Յեթե այդ դժբախտ պատերազմը չլիներ, մենք թերևս վոչինչ ել չիմանայինք նրա ճանապարհորդությունների մասին, այլ և նրա անունն ամենայն հավանականությամբ միանգամայն կմոռացվեր:

Մի տարուց հետո տեղի ունեցավ գերիների փոխանակություն: Մարկո Պոլոն ազատվեց և վերադարձավ Վենետիկ: Այստեղ նա ամուսնացավ և ունեցավ յերեք աղջիկ: 1324 թվին նա մեռավ և թաղվեց Լավրենտիոսի յեկեղեցում:

Յերբ Պոլոն պառկած էր մահվան մահճում, նրան հարկադրաբար խնդրեցին ճշտել յուր պատմությունների իսկությունը, — այնքան նրանք անհավանական էլին թվում յուր արկածները ժամանակակիցներին:

Յեվ հետադայում, հարյուրավոր տարիներ հետո, մինչև 19-րդ դարի սկիզբը ներառյալ, մի քանի հետազոտողներ չեյին հավատում այդ պատմությունների իսկությանը, դրանք համարելով մտացածին բաներ: Այնուամենայնիվ բանտում Մարկո Պոլոյի հաղորդածի համաձայն գրի առնված պատմությունը նրա ճանապարհորդությունների մասին գուզագիպում էր ձեռագիր որինակներից մեծ մասին:

Իմիջի ալոց Քրիստափոր Կոլումբոսը յուր ճանապարհորդության պլանը կազմելիս, վորին հաջորդեց Ամերիկայի գյուտը, հենվել էր Մարկո Պոլոյի պատմության վրա, յերբ հաստատում էր, վոր արևմտյան ուղղությամբ գնալով կարելի չի հասնել Հնդկաստան:

Մարկո Պոլոյի նկարագրությունները մեջ պատահում են մի քանի անհամապատասխանություններ: Որինանով՝ այնտեղ, վորտեղ նա խոսում և հյուսիսային խավար յերկրի և հսկայական կղզիների մասին. մյուս կողմից նրա պատմությունների մեջ չեն հիշատակվում այնպիսի բաներ, վորոնք թվում և, թե սլետք և գրավիյին:

նրա ուշադրութիւնը: Այսպէս, նա վեջ մի խոսք չի ասում չինական հռչակավոր պարսպի մասին, վորի դռներով նա մի քանի անգամ պետք և անցած լինէր:

Ինչպիս ել վոր լինի, Մարկո Պոլոյի գիրքը մի ամբողջ գլուտ հանդիսացաւ աշխարհագրութեան մեջ, և նրա գլուտերի ու նկարագրութիւնների մեծամասնութեան նշտութիւնը վերջերում, հինգ դար անցնելուց հետո, լիովին հաստատվեց: Նրա կյանքը նման և հեքիաթի, այնուամենայնիւ՛ր որոշ ժամանակների նախադարձորդների մեջ նա գրավում և առաջին և ամենապատվաւոր տեղերից մեկը: Ուստի և մենք տեղ ենք տալիս նրան ներկա գրքույկի մեջ:



Ն. Ն. Միկլուխո-Մակլայն իր խրճիթի
մոտ — Նոր Գվինեայում:

ՌՈՒՍ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԵ ՆՈՐ-ԳՎԻՆԵԱ ԿՂՋՈՒՄ

1781 թ. սեպտեմբերի 20-ին ռուսական «Վիտյազ» անունով ղինվորական կորվետը * խարիսխ ձգեց Նոր-Գվինեա կղզու հյուսիս-արևելյան ափերի մոտ, Աստրոլյարի ծովախորշում: Նավի վրայից դառնում ռուս ճանապարհորդ Ն. Ն. Միկլուխո-Մակլայնը, վորը մտադրվել էր իջնել ալդտեղ յուր յերկու ուղեկիցների հետ, նըրանցից մեկը շվեդ էր, կետորսական նավի նախկին նավաստի, իսկ մյուսը՝ պուլինեզիացի**։ Նոր-Գվինեա կղզու վրա ռուս հյուսիսից վոչ վոք չէր սպասում և չէր էլ ճանաչում նրան: Նա առաջին սպիտակամորթն էր, վորը վոտ էր գնում կղզու ափերին: Ճանապարհորդը չափազանց սուղ նյութական և բարոյական միջոցներ ունեւր, և նրա ծրագիրը — Նոր-Գվինեայի վայրենիների մեջ անցկացնել մի քանի տաբի, նրանց սովորությունները, լեզուն և

* Յեռակայմ մարտանավ:

** Պաղաղ ովչիա նոսում գանվոյ կղզիների խումբ — Նոր-Ձեյանդիա, Հաւվայան, Ընկերության, Մարկիզյան, Մամոա և այլն, վորոնք մեծ մասամբ անգլիական, ֆրանսիական և ՀԱՄՆ-ի գաղութներ են Մ.Բ.

կենցաղն ուսումնասիրելու համար, նա իրադրո՞ծեց զրեթե բացա-
ռապես յուր անձնական ռիսկով, յուր սեփական համեստ միջոց-
ներով:

Հենց միևնույն ուր, մերժելով նավի հրամանատարի զինված
պահպանութեան վերաբերյալ արած առաջարկը, Միկլուշտ-Մակ-
լայը յուր յերկու ծառաների՝ Ուլստնի և Բոյի հետ մի փոքրիկ
նավակով ուղևորվեց ղեպի ափը: Ծովախորշի ժայռոտ ափի հե-
ռավոր ծայրին բաժն հակայական ծառերը իջեցրել էին իրենց
սաղարթները մինչև ջրի մակերևույթը, և անթիվ-անհամար լիան-
ներն ու այլ պարապիտային բույսեր իրենց ծաղիկ շղթաներով
կապմել էին մի խակալան վարադույր՝ ծառերի արանքում: Այս-
տեղ ճանապարհորդն առաջին անգամ ծանոթացավ տեղացի վայ-
րենիների հետ, առաջարկելով նրանց դանազան բնձաններ՝ ուլունք-
ներ, մի քանի մասերի բաժանված բամբակե կարմիր կտորներ,
նեղ ժապավեններ, և այլն, և այլն: Ուղեկիցներին թողնելով նա-
վակում, նա մի նեղ շավիղով շուտով հասավ տեղացիների դյու-
ղին: Հրապարակի շուրջը խրճիթներ էին կանգնած, վորոնց տա-
նիքները շինված էին արմավենու տերևներից և իջնում էին
զրեթե մինչև գետին: Շուրջը բաժն էին խայտաբղետ տերևնե-
րով թփեր և բարձրանում էին փառահեղ արձավենիներ: Ան-
տառի ընդհանուր տեսարանը, վոր կազմված էր բանաններից,
պանդանոսներից, հացի ծառերից, կոկոսյան և այլ տեսակ ար-
մավենիներից, կենդանացնում էին չինական վարդի վառ բոսո-
րադույն ծաղիկները և դանազան տեսակ բաղեղնածե ծնթորին-
ների գեղնա-կանաչավուն ու դեղնա-կարմրավուն տերևներն ու
Goleus: Խրճիթների ղոճները գտնվում էին յերկու ֆուտ բարձ-
րութեան վրա, այնպես վոր ավելի շուտ նման էին պատուհան-
ների և միակ բացվածքն էին կազմում, վորի միջով կարելի էր
թափանցել բնակարանի ներսը: Ներսում, կիսախավարի մեջ կա-
րելի էր նշմարել բամբուկից շինված բարձր տախտեր, հատակին
մի քանի քար, վորոնց մեջտեղում առկայծում էր կրակը, պա-
տերին խնուճների շարաններ և փետուրներ, խիլ տանիքի տակ,
վոր սեպակ էր մրից՝ մարդկային դանդ: Դյուղում մարդկային
շունչ էր յերևում, բայց ամեն բանից յերևում էր, վոր բնակիչ-
ները հենց նոր էին ցիր ու ցան յեղել: Չնայած դրան, ճանա-
պարհորդին հաջողվեց ծանոթանալ տեղացիներին հետ, վորոնք ան-
վճարկան կերպով սկսել էին հավաքվել չառնված հյուրի շուրջը,
պատրաստ ամեն բոլե փախուստի դիմելու: Պապուսները զին-

ված էյին քարե կացիններով և մեծ, գրեթե մարդաչափ աղեղով և մետրից ավելի նետերով։ Նրանց մազերը նեգրերի մազերի պես գանգուր էյին, ներկված սև կամ կարմիր կավով. մի քանիսի գլուխները ծածկել էյին գլխարկի պես, վոմանց մազերը կարճ խուզած եր, իսկ վոմանց ել խոպոպիկներով կախված էյին և հասնում էյին մինչև ուները։ Նրանց ամբողջ զգեստը բաղկացած եր 8 սմ. լայնություն ունեցող մի լաթից, վոր կապված եր վորպես գոտի, հետո այդ գոտին իջնում եր և յերկու վոտքերի արանքով յետևի կողմից ամրացվում գոտուն։ Բազուկներին, արմուկներին, վեր, ամուր կերպով կապված էյին հյուսած ապարանջաններ, վորոնց մեջ ամրացված էյին զանազան իրեր — վոսկրեր, տերևներ, ծաղիկներ և այլն։ Վայրենիները ընծաներ ստացան հուլունքներ, մեխեր, ձուկ վորսալու կարթեր և կարմիր կտորի նեղ շերտեր։ Կարթերի և մեխերի նշանակության մասին, ըստ յերևութին, նրանք գաղափար չունէյին, բայց ուրախությամբ ընդունեցին։

Վայրենիների անվստահությունը վերացավ, և յերբ ճանապարհորդը վերադառնում եր իր նավակի մօտ, նրան հետևում եր արդեն բավական մեծ ամբոխ, վոր տանում եր իր հետ ընծաներ. կոկոսյան արմավ, բանան և յերկու վայրի խոզի գոճի, վոտքներն ամուր կապկպած։

Հետևյալ ուր իսկ Միկլուխո-Մակլայը ասի մօտ մի տեղ ընտրեց, վորտեղ և վորոշեց ընակություն հաստատել։ Կորվետից այդ տեղ բերվեցին շինարարական նյութեր, հյուաներ տեղը մաքրեցին և շինեցին մի խրճիթ։ Խրճիթը, վոր ուներ 14 ֆուտ յերկարություն և 8 ֆուտ լայնություն, բրեզենտով յերկու մասի յեր բաժանված։ Նույն նյութից, փայտի պակասության պատճառով, շինված էյին և պատերի վերին մասերը։ Յերբ հետո կորվետից ասի հանվեցին զանազան ծանրոցներ, ապա խրճիթը գրեթե մինչև առաստաղը լցվեց զանազան արկղերով, գործիքներով, մթերքներով և այլն, և յերեք ճանապարհորդները մեծ գժվարությամբ տեղավորվեցին այնտեղ։

Սեպտեմբերի 27-ին «Վետայադը» խարխալը բարձրացրեց և ճանապարհ ընկավ, իսկ յերեք համարձակ մարդիկ մնացին կղզում. բացառապես իրենք իրենց բախտին թողնված։

Դեռևս կորվետի մեկնելուց առաջ առաջին տեղացին, վորի հետ Միկլուխո-Մակլայը ծանոթացավ, բարեկամաբար եր տրամադրված գնալ ճանապարհորդը, վորը և մի բավական զվարճալի մեջկատակություն խաղաց նրա առաջ. ցույց տալով հետվում

կանգնած կորովեաք, իսկ հետո յերեք ճանապարհորդներին և զետինը, նա մի ինչ վոր շարժում կատարեց զեպի հարեան անտառը, հետո, մտանալով կառուցված խրճիթի ցցերին, նա ձեացրեց, թե կըտրում ե նրանց, ապա ուղղվեց, մեկ վոսքը յետ դրեց և աջ ձեռքը բարձրացնելով ափսոսալի զիրք ընդունեց, վոր կարծես նիզակ եր արձակում, ապա մոտեցավ Միկլուխո-Մակլային, մատով մի քանի անգամ հրեց կրծքին և վերջապես աչքերը կիսափակ, բերանը մի փոքր բաց անելով և լեզվի ծայրը հանելով, ընդունեց գետինն ընկնող մարդու գրությունն։ Այդ մեջկատակությամբ նա նախադրուշացնում եր քաջասիրտ սպիտակամորթին։ Իր շարժումներով վայրենի բարեկամն ուղում եր ասել նրան, վոր նավի հեռանալուց հետո տեղացիները կկործանեն նրա խրճիթը և կսպանեն նրան։ Այս հեռանկարն ավելի քան հավանական եր։ Պապուասների թշնառական գործողություններն սկսվել էյին կղզու վրա բնակություն հաստատելու հենց առաջին որովանից։ Բայց առաջին իսկ ռազմական յեղույթը վերջացավ բավական խաղաղ կերպով, իսկ յերկու որից հետո հենց նույն տեղացիների խուճրը խրճիթի մոտ յերեսաց ընծաներով։

Միկլուխո-Մակլայը, առանց ժամանակ կորցնելու, տեղացիների հետ ինքնուրույն կերպով ծանոթանալու քայլեր արեց և ուղեորվեց ալցեկելու մոտիկ գյուղը։ Նա վոչ մի զենք չվերցրեց իր հետ։

Արեադարձային անտառի թփուտներէ միջով, մի նեղ ու խուլ շաղկով անցավ նա իր բախտին թողնված և գիմեց զեպի տեղացիների գյուղը։

Անսպասելի հյուրին տեսնելով գյուղի մեջ, հրապարակի վրա, կանայք և յերեխաները աղագակ պիտի բարձրացնէին, բայց արագորեն անհայտացան։ Մնաց տղամարդկանց մի խումբ. ամենքն ել զինված էյին և մասյլ ու անհանգիստ կերպով նայում էյին ստարականին։ Մի քանի նեա թռան նրա մօտով, մի վայրենի ճոճեց նիզակը և քիչ մնաց փորեր նրա աչքը։ «Իմ գրությունը, — պատմում և Միկլուխո-Մակլայը, — շատ հիմար եր. խոսել չգիտանալով, լավ կլիներ թողնել հեռանալ, բայց յես սաստիկ ցանկանում էյի քնել։ Առանց յերկար մտածելու, յես հովում մի հարմար տեղ նկատեցի, քարշ ավի ափսոսել նոր խիրը և խիստ մեծ բավականությամբ տարածվեցի նրա վրա։

Դնեցի յերկու ժամից քիչ ավելի։ Աչքերս բանալով, յես տեսա մի քանի տեղացիների, վորոնք նստած էյին իմ շուրջը, յերկու

քայլ ինձնից հեռու: Նրանք կիսաձայն զրուցում էին և խոսում բետլյան պղպեղաթուփը*: Նրանք անզնն էին և նայում էին ինձ վոչ խոփու կերպով: Յես շատ ամիսսացի, վոր դեռ ևս չեմ կարողանում խոսել նրանց հետ: Հետո յես վեր կացա, գլուխս շարժեցի զանազան կողմեր և նույն շավղով սկսեցի վերադառնալ խրճիթս»: Հարևան դռնակներն արած այցելությունները զրեթե նույն բնույթն ունեյին. անբարյացակամ վերաբերմանքը, կասկածամտությունը, պատրաստ յուրաքանչյուր ըստն զենքի դիմելու և միևնույն համեմատաբար խաղաղ վախճանը:

Բայց և այնպես Միկլուխո-Մակլայի համար պարզվեց մի բան, վոր տեղացիների անվստահությունը հաղթահարելն այնքան ել հեշտ դործ չի լինի իր համար և վոր այդ մի բանի համար քիչ ժամանակ, համբերություն և տակտ չի պահանջվի իր կողմից:

Այսպես, հաջորդաբար կատարելով բնագիտական հետազոտություն և ազգագրական դիտողություններ, Միկլուխո-Մակլայն սկսեց մի քիչ մտերմանալ տեղացիների հետ: Այդ մերձեցման մեջ ընծաները խիստ եյական դիր էյին կատարում, ընդվորում բնիկները յերբեք պարտք չեյին մնում, իրենց կողմից ևս ընծաներ տալով, առավելապես կոկոսյան ընկուզներ, բանաններ և միս: Դիչ առ քիչ ճանապարհորդներն սկսեցին բարելավել նաև իրենց կենցաղը: Խրճիթի մոտ շինեցին հովանոց, ստեղծեցին մի փոքրիկ բանջարանոց, վորտեղ տնկեցին բակլայի և դդումի սերմեր՝ Տայիտի կղզուց և յեգիպտացորեն: Տեղացիներն սկսեցին այցելել Միկլուխո-Մակլային և՛ մեկիկ և՛ մեկիկ և՛ ամբողջ խմբերով: Գալիս էյին և հարևան կղզիների բնակիչները: Սակայն անվստահությունը դեպի ոպիտակամորթը, համառորեն պահպանվում եր: Այսպես, մեկ անգամ նա իր հյուրերին կատակով առաջարկեց յերկու մեծ դանակ, յեթե նրանք կթողնեն իր մոտ ապրելու փոքրիկ պապուասին, վոր յեկել եր նրանց հետ: Նրանք միմյանց աչքով արին, անհանգիստ կերպով մի քանի խոսքեր փոխանակեցին, ապա ինչ վոր բան տոացին յերեխային, վորից հետո նա վազելով իրեն զցեց անտառը: Ճիշտ է, նրանք սկսեցին նրա մոտ դալ առանց զենքի, բայց հաճախ մոտիկ տնդերում, թփերի մեջ թողնում էյին իրենց զինված ընկերներին, վորպեսզի նրանք հարկը պահանջած դեպքում ոգնության հասնեյին իրենց: Կանայք դեռևս քաշվում էյին և սպիտակամորթին տեսնելուց, անմիջապես փախուստի էյին դիմում:

* Անում և Արեկյան Հնդկաստանում և Մալայան կղզիների վրա (Մ. Թ.):

Քիչ առ քիչ Մակլայը՝ հաղթահարելով վայրենիներին անվատա-
հույթ յուռնը, ծանոթացավ նրանց սովորություններին, կենցաղի հետ,
սովորեց նրանց լեզուն և հաշվելու սխառեմը, վոր այդ ժամանակ-
ներում չգիտէր և վոչ մի յեմբողացի:

Ահա ինչպէս և նկարագրուեմ նա, որին ակի համար, պապուա-
ների հաշվելու յեղանակները.

«Յես վերցրի թղթի մի քանի շերտեր և սկսեցի կտրտել նրանց
ըստ լայնութեան ու մի ամբողջ բուռ տվի տեղացիներինց մեկին,
ասելով, վոր կտորներից յուրաքանչյուրը նշանակուեմ և յերկու ուր:
Ամբոսն անմիջապէս շրջապատեց նրան: Իմ պապուաան սկսեց մատ-
ներով հաշվել, բայց ըստ յերևույթին անհաջող կերպով: Համենայն
դեպս մյուս պապուաաները գտան, վոր նա հաշվել չգիտէ և կտոր-
տանքները հանձնեցին մեկ ուրիշին: Սա դուռդարար նստեց, մեկ
ուրիշին ողնութեան կանչեց և յերկուսով սկսեցին հաշվել: Առա-
ջինը, թղթի կտորտանքները ծնկան վրա դարսելիս յուրաքանչյուր
կտորը հաշվելու ժամանակ կրկնում եր. «նարե», «նարե» (մեկ).
մյուսը կրկնում եր «նարե» բառը և միաժամանակ ծալում մատնե-
րից մեկը, նախ մեկ, ժպտ՝ մյուս ձեռքի վրա: Մինչև տասը հաշ-
վելուց և յերկու ձեռքի մատները ծալիլուց հետո, յերկու բուռեցքն
էլ ցած թողեց ծնկների վրա՝ ասելով — «յերկու ձեռք», ընդ վո-
րում յերրորդ պապուասը ծալեց ձեռքի մեկ մատը: Յերկրորդ տա-
նյակի հետ կատարեցին նույնը, ընդ վորում յերրորդ պապուասը
ծալեց յերկրորդ մատը: Նույնը կատարվեց յերրորդ տասնյակի
հետ: Մնացած թերթիկները չորրորդ տասնյակ չեյին կազմում,
ուստի դրվեցին մի կողմ: Ամենքն էլ, ըստ յերևույթին, զո՛ւ մնա-
ցին այդ բանից: Յես նորից ցանկացա շփոթել նրանց. վերցնելով
կտորտանքներից մեկը, յես ցույց տվի իմ յերկու մատը, ասելով՝
«բում», «բում» (որ-որ): Նորից բացատրություններ յեղան, բայց
վերջնականապէս վճռեցին այնպէս, վոր կտորտանքները փաթա-
թեցին հացի ծառի տերեւներով և խնամքով կապեցին, վորպէսզի
յյուզուեմ նորից հաշվեն:

Առանձին համբերություն և հնարագիտություն եր պահանջ-
վում տեղացիներին լեզուն սովորելու համար, վոր դժվարանում եր
զուտ տեղական բարբառների բաղմաղանութեան պատճառով:
1872 թ. հունվարի 25-ի Միկլուխովի որսորդում կարդում ենք հե-
տեյալը. «Այսոր միայն իմացա, այսինքն այստեղ ժամանելու
հինգերորդ ամսում «առաւիտ», «յերկու» բառերի անունները. դի-
շերվա անունը դեռեւ չեմ իմացել: Ծիծաղելի, և նույնիսկ վիրա-

վորական ե ասել, վոր միայն այսոր ինձ հաջողվեց իմանալ, թե ինչպես պետք ե արտահայտել պապուհասերեն «լավ» կամ «լավ եր» բառը: Մինչև այսոր յես յերկու անգամ մոլորության մեջ եմ ընկել յենթադրելով, թե գիտեմ այդ բառը և, հասկանալի յե, վոր գործ եմ ածել այն: Ըստ յերևույթին պապուհաները չեյին հասկանում, վոր յես այդ բառով ուզում եմ ասել «լավ»: Շատ դժվար ե ստիպել քեզ հասկանալ, յերբ բառն, վոր ուզում ես ասել, ուղղակի առարկայի անունը չե: Որինակի համար, ինչպես բացատրել, վոր ցանկանում ես իմանալ» «լավ» բառը: Վերջում ես մի վորեն առարկա, վորի մասին դիտես, վոր նա տեղացուն դուր ե գալիս, իսկ մյուս ձեռքով՝ մեկ ուրիշը, վորը քո կարծիքով, նրա համար վոչ մի արժեք չունի. ցույց ես տալիս նրան սուսլին առարկան և ասում ես «լավ», աշխատելով միաժամանակ զո՛ւ տեսք ընդունել: Տեղացին գիտե, վոր ուսերեն բառը լսելով, պետք ե ասի իրենը և ասում ե մի վորեւ բառ. հետո ցույց ես տալիս մեկ ուրիշ առարկա, թթված գեմք ես ընդունում և արհամարհանքով շարտում այն, բայց «վատ» բառը տեղացին նույնպես իրենն ե ասում. փորձում ես մի քանի անգամ դանազան տեղացիների հետ — տարբեր բառեր են ստացվում: Վերջապես յերկար փորձերից և կասկածանքներից հետո յես հանդիպեցի մի տեղացու, վորը, ինչպես յես համոզված եյի, ինձ հասկացավ: Պարզվեց, վոր «լավ» բառը պապուհասերեն ասվում ե «կաղ»: Յես դրեցի այդ բառը, մտքումս պահեցի և գործածեցի յերկու ամիս: Հետո հետադոտողը համոզվել ե, վոր «կաղ» նշանակում ե «ծխախոտ»: Խեցերի ցուցատրությամբ «լավ» բառի հետ կատարված նոր փորձը «լավ» բառի հասկացողության համար տվեց նոր «վար» բառը: Այս բառը Մակլայը գործ եր ածում մոտ մեկ ամիս և վերջ վերջո համոզվեց, վոր «վար» բառը նշանակում ե մեծ խեցի: «Լավ» բառի իսկական նշանակությունն իմացավ նա զարտուղի ճանապարհով, դրա համար գործադրելով ուղիղ տասն ու, նա սկսեց տեղացիներին տալ զանազան աղի, թթու, դառն բաներ և սկսեց տկանջ դնել, թե համն առնողներն ինչ կասեն իրենց ընկերներին: Այդպիսի մեթոդով նրան հաջողվեց հաստատել, վոր «վատ», «վոչ լավ» հասկացողությունը պապուհասերեն ասվում ե «բորլե», հետո արդեն այդ բառի ոգնությամբ նա կարողացավ իմանալ և այդ բառի հակառակ նշանակությունը: Պատահեւ են և ավելի կոմիկական դեպքեր: Այսպես, տեղացիները Մակլայի հետ ունեցած զրույցի ժամանակ գործ եյին ածել «կիրինդա» բառը: Մակլայը վճռեց, վոր այդ բառը

կին կնշանակե և ամբողջ չորս ամիս տեղացիներէ հետ ունեցած խոսակցութիւններէ ժամանակ գործ եր ածուամ այդ բառը վերոհիշյալ խմատով: Հետո պարզվել և, վոր տեղացիներէ լեզվում առհասարակ այդպիսի բառ չկա և վոր տեղացիները գործ եյին անել այն, հալատացած լինելով, վոր այդ բառը ուսաներեն և:

Թե ինչքան դանդաղ եր ընթանում Մակլայի կողմից պապուսասկան լեզուն ուսումնասիրելու գործը, յերեւում և նշանից, վոր այնպիսի բառեր, ինչպիսին են «հայր», «մայր», «վորդի» նրան հաջողվեց իմանալ միայն յուր կողին ժամանելու յոթերորդ ամսի վերջին:

Նոր-Դիլինսայի վարթամ ընտելթյունն ու ընակիչները ուսումնասիրութիւններէ և դիտողութիւններէ անսպառ նյութ եյին ներկայացնում: «Ափսոս, — գրում և Մակլայը յուր որագրում, — վոր աչքը չի կարող տեսնել և նկարել իր շուրջը գտնվող բոլոր բաները և ուղիղը շատ թույլ և այդ ամենը հասկանալու համար... Դիտական նյութեր ձեռք բերելու նրա բոլոր ջանքերը հաճախ վերջանում եյին զավեշտով: Այսպես, ցանկանալով ունենալ պապուսաների մազերի շիւղկիցիս, նա, վորպէսզի կարողանա համոզել տեղացիներին համաձայնելու մի այդպիսի յուրատեսակ ընծա տալու, տեղացիների մազերի մի փնջի համար առաջարկում եր իր մազերի մի փունջը: Վորոջ ժամանակ անցնելուց հետո Մակլայի ուղեկիցիներից մեկը նրա ուշադրութիւնը հրաշխեց այն բանի վրա, վոր նրա գլխի աջ ժասը գրեթե մերկացել և: Այդ ժամանակ Մակլայը յուր սանրվածքի գեղեցկութիւնը վերականգնելու համար, սկսեց խուզել և տեղացիներին տալ գլխի ձախ մասի մազերից:

Հրազները գործածելուց խուսափելով և վոչ մի անգամ չգործադրելով տեղացիներէ զեմ, Մակլայը նրա ազդեցութիւնը նրանց առաջ ցուցադրեց միայն յուր կզգու վրա հաստատվելուց մի քանի ամիս հետո, վորպէսզի ցույց տա, վոր ինքն ունի թշնամիներից պաշտպանվելու ուժեղ միջոց և, բացի այդ, այն տեղացիներէ ազահովութեան համար, վորոնք կարէք կուենանայ այդպիսի պաշտպանութեան: Հետո նա սկսեց զենքը գործադրել վորսի ժամանակ, ամեն անգամ յերկյուղ առաջացնելով տեղացիների մեջ, Կարէք ունեցողներին բժշկական ոգնութիւն ցույց տալով, վոչ մի անգամ բռնութիւն չգործադրելով, Մակլայն աստիճանաբար ձեռք բերեց տեղացիների անսահման վատահովութիւնը: Հարեան կզգիների տեղացիները, չխոսելով այլևս

հարեալն գլուղերի բնակիչների մասին, մշտապես այցելություններ ելին կատարում նրան և ընծաներ ու պարգևներ բերում: Սպառնելով պատասխան-ընծաների համար ունեցած իր պաշարը, Մակլայը դիմեց խորամանկության: Այսպես, մի անգամ պատրաստի ընծա չուենալով, նա շիշը ջարդեց և կտորատանքները բաժանեց հյուրերին, վերոնք մեծ բավականությամբ ընդունեցին այն:

Քիչ առ քիչ նա դարձավ նրանց ցանկալի հյուրն ու տոնակատարությունների մշտական մասնակիցը, վորպիսի հանգամանքը նրան հնարավորություն տվեց մոտիկից ծանոթանալու բնության այդ դավակների կենցաղին ու բարքերին, վոր մինչև Մակլայի գալն ապրում էին քարե դարում և չգիտեին կրակ ստանալ:

Այսպիսի պայմաններում կյանքն ուներ և իր մութ կողմերը. դժվար էր ընտելանալ կլիմայական պայմաններին, վորոնցից քիչ չէին տանջվում և տեղացիները: Մակլայի ուղեկիցներից մեկը մեռավ կղզու վրա բնակություն հաստատելուց մի քանի ամիս հետո, իսկ մյուսը գրեթե ամբողջ ժամանակ, մի քանի ընդհատումներով միայն, տառապում էր ջերմախտի խիստ արտահայտություններով, այնպես վոր Մակլայի համար վոչ այնքան ողնական էր հանդիսանում, վորքան խոչընդոտ, վորովհետև մշտական խնամք էր պահանջում: Այնպիսի ձախորդությունների հետ, — ինչպիսին է շաքարի բացակայությունը, մսի սակավության պատճառով սննդի պակասությունը, նույն իսկ աղի բացակայությունը — Մակլայն առանց դժվարության հաշտվում էր, բայց նրան լուրջ մտահոգություն սկսեց պատճառել այն հանգամանքը, վոր ունեցած քինաքինայի պաշարն էր սպառվում: Մինչդեռ իր սեփական առողջությանն արդեն վտանգ էր սպառնում, — նա նույնպես սկսեց էր տանջվել ջերմախտի արտահայտություններով: Նրա որագիրը կարդալով, զարմանում էս նրա դիմացկունությամբ, տեսնում էս, վոր նա չի թողնում աշխատանքը և շարունակում է իր դիտողությունները, նույն իսկ բոլորովին հիվանդ ժամանակ: Թե ընկերոջ և թե իր սեփական հիվանդությունը հարկադրեցին Մակլային թողնել Նոր-Գվինեա կղզին, 15 ամիս այնտեղ ապրելուց հետո: 1872 թ. դեկտեմբերի 19-ին, այն տեղին, վորտեղ ապրել էր Մակլայը, մոտեցավ ուստական «Ջորուխտ» նավը, վորի հրամանատարին հանձնարարված էր վերցնելու այն թղթերը, վոր Մակլայը, իր խոստման համաձայն, պիտի թողներ պայմանավորված տեղում, յուր ձեռնարկությունը ձախողելու դեպքում. և՛ Մակլայի հայրենիքում հավատացած էլին, վոր նա կամ մեռել է, կամ սպանվել: Հրա-

ժեշտի ժամին պատուամաների կողմից ցույց տրված համակրանքի սրտատուչ արտահայտութիւններին հետո, վորոնք հրաժեշտի համար ման ածեցին նրան իրենց գլուղերով, հայտնեցին իրենց բարեկամութեան մասին, վոր պատրաստ են նրա համար նոր տուն շինելու, առաջարկեցին կնութեան առնել ցանկացած աղջկան, — Մակկայը գեկտ. 22-ին յուր իրեղևներն ու կոլեկցիաները տեղափոխելով «Ձմրուխտ» նավը, հրաժեշտ տվեց իր սեղացի բարեկամներին և թողեց Նոր-Գլինեայի ափերը, քիչ վիշտ չպատճառելով նրանց։

Մակկայի մարդասիրական վերաբերմունքը գեպի վայրենիները, վոր բացասիկ բան եր վոչ միայն յուր ժամանակի, այլ և մեր որերի համար, յուր արժանի գնահատականն և ստացել գեռես Լ. Ն. Տօլստոյի կողմից. — «Ինձ հուզում և հիացմունք և պատճառում, — գրում և նա ճանապարհորդին, — վոր վորքան ինձ հայտնի յե, դուք առաջինը փորձով անտարակույս ապացուցեցիք, վոր մարդն ամեն տեղ մարդ և, այսինքն բարի, անկեղծ ելալ, վորի հետ կարելի յե և պետք և հաղորդակից լինել բարութեամբ և ճշմարտութեամբ, այք վոչ թե թնդանոթներով և ողկով»...

Մաշոյ հիվանդութեանը չեր սպառում մեր ճանապարհորդի ուժերը և չեր մարում նրա մեջ հետադոտական յեռանդը։ Միևնույն կորովետով նա այցելեց և Մոլուքյան, Տերնատե, Տիգոր, Յելերես, Ֆիլիպյան կղզիները։ Հետո Հոնդ-Կոնդում մասնավոր նավ նստելով, գնաց Սինդապուր և Բատավիա։ Այնտեղից նա իր սեփական միջոցներով մի եքսպեդիցիայի յե ձեռնարկում, վորի նպատակն եր ուսումնասիրել Նոր-Գլինեա կղզու հարավ-արևմտյան ափերը։ Մի վոչ մեծ, առանց տախտակամածի նավով ճանապարհ և ընկնում և իր համար բազա ստեղծում Նամատտու կղզու վրա։ Բայց նրա շինած խրճիթն իր բացակայութեան ժամանակ հարձակման յենթարկվեց, վորի միջոցին վոչնչացան գիտական գիտողութեւնների համար անհրաժեշտ շատ գործիքներ և ուտեստի պաշար, իսկ ինքը՝ ճանապարհորդը ծանր կերպով հիվանդացալ և կիսամեռ վիճակում տեղափոխվեց Յավա կղզին։ Ծանր հիվանդութեանից հաղիվ մի փոքր ապաքինված, չնայելով գրամական միջոցների սղութեան, գնում և Մալակա թերակղզին, վորտեղ չորս ամիս շարունակ միջոցներ և փնտռում (հունիս — հոկտ. 1875 թ.) աներևակայելի դժվարութեւններ կրելով։

Նոր-Գլինեա կղզու վրա թողած իր հին բարեկամներին, սակայն, Մակկայը չմոռացալ, և 1876 թ. առևտրական թեքակայմ

նաւով գնաց «Մակլայի աիւր» և 17 ամիս ապրեց այնտեղ: Տեղացիներէ կողմից Միկլուխո-Մակլայն ընդունւում է անսովոր ուրախութեամբ, վորպէս վաղեմի բարեկամ, — և իրոք դառնում է այդպիսին: Այդ որվանից սկսած, ինչպէս և դեպի Նոր-Գվինեա կատարած նրա հետագա ճամբորդութեան ժամանակ, 1878 — 1882 թ. նա հանդիսանում է վորպէս պապուաական խակական տրիրու, յուրաքանչիւր հարմար դեպքի ժամանակ — հանդես գալով այդ՝ նրա կարծիքով ճնշվող և աշխարհի յերեսից անհետացող մարդկանց պաշտպանութեան համար:

Միկլուխո-Մակլայի հետագա կյանքն անցնում է անընդհատ ճանապարհորդութեանների մեջ, մերթ Մալայան արշիպելագի կղզիները, մերթ Ռուսաստան և Արևմտյան Յնդոսլա, վորտեղ նա գիտական ընկերութեաններում մի շարք պատմվածքների, հոգևածների և զեկուցումների միջոցով հասարակական լայն շրջաններին ծանոթացնում եր իր կոտարած աշխատանքների և գիտողութեանների արդյունքների հետ, յերբեմն Սիդնեյ եր գնում, վորտեղ զլիսավորապէս զբաղվում եր իր հավաքած ահագին գիտական նյութերի մշակութեամբ: Նրա ձգտումը — ուսն հասարակութեան՝ և պետութեան ուշադրութեանը հրավիրել Մեկանեղիայի՝ կղզիների վրա և այնտեղ ուսական գաղութ ստեղծելու փորձը — Ռուսաստանում բավական սառն ընդունելութեանը դուռ, և նրա բոլոր ձեռնարկումները թաղված մնացին, թեև գիտական ընկերութեաններն ու կաղմակերպութեանները խոստովանում եյին Միկլուխո-Մակլայի մատուցած գիտական խոշոր ծառայութեանները:

Յուր աշխատանքները կարգի բերելու և սիստեմի վերածելու, ինչպէս նաև նրանց գրական ձև տալու գործը հաջողվեց նրան. ճակատագրի հարվածներով միանգամայն հյուժված ու ճնշված, թեպետ և հոգեպէս անընկճելի, նա մեռավ նախկին Պետերբուրգում 1888 թ. 42 տ. հասակում:

* Այստալիայից դեպի հյուսիս-արևելք ընկած մի խումբ կղզիների՝ Նոր-Գվինեա, Ֆիջի, Սողոմոնյան և այլն ընդհանուր անունը:

ԱՄԱԶՈՆ ԳԵՏԻ ՎՐԱՅՈՎ

Պերույում գտնվող Անդյան լեռնաշղթայից սկիզբն և առնում Հարավային Ամերիկայի ամենամեծ գետը՝ Ամազոնը։ Սկզբում նա հոսում և գետի հյուսիս և ունի համեստ չափեր։ Բայց ահա նա թեք վտրտ և կատարում գետի արևելք, իր համար ճանապարհ բաց անելով ժայռերի արանքով և մի 50 մետրից վոչ ավելի լայնությամբ ունեցող նեղ, կիրճի միջով, խլացուցիչ աղմուկով գահավիժում և ցած, առաջացնելով մի շարք սահանքներ և ջրվեժներ։ Աստիճանաբար ազատվելով ժայռոտ շղթաներից, նա մեծանում և յուր չափերի մեջ, շնորհիվ բազմաթիվ գետակների ու գետերի, վորոնք վազում են Անդյան սառցադաշտերից և, թողնելով իր յետևում լեռների և բլուրների վերջին ճյուղերը, փոխարկվում և մի փառահեղ գետի։

Ամազոնի աղուները գտել և Մարանյոն անուանով մի սպանացի գինվոր՝ 1535 թ, իսկ գետաբերանը գտնվել և գեոևս 1500 թ. Վինցենտի Պինցոնի շնորհիվ։ Մարանյոնը Հդիտեր, թե վորտեղ և թափվում գետը, իսկ Պինցոնին Հդիտեր, թե վորտեղից և սկիզբն առնում այն։ Նրա միջին հոսանքի գյուտը վիճակվեց մեկ ուրիշ սպանացու՝ Որեյլանին։

Պերուն նվաճող Ֆրանցիսկ Պիզարրոյի զորախմբում ծառայում էր և նրա յեղբայր Գոնզալոն, հյուսիսային Պերույում։ Գայթակղվելով արևելքում յեղած վտակու հսկայական հարստությունների ժառին հազարաւած նրա պատմություններով, Պիզարրոն 350 սպանական հեծյալներից և 4000 հնդիկներից բաղկացած մի զորախումբ կազմեց և Անդեյի միջով շարժվեց գետի Նապո գետի հարթությունը։ Այդ իսկապես վոր մի անմիտ ձեռնարկություն էր։ Հնդիկները ժառաջորեն սառչում էյին լեռնային բարձրու-

Թյուճններէ վրա, իսկ վոսկու փոխարեն, ավանտյուրիստները գտան միայն անապատներ, ճահիճներ և անտառներ, վորոնց հողն ուռել եր՝ յերկու ամիս անընդհատ տևող անձրևներից: Գազաններից պատահում եր միայն հաստակաշի տապիրը: Ծանապարհորդներին յերբեմն պատահող տեղացիները Թշնամաբար եյին տրամադրված լինում դեպի նրանց:

1540 Թ. սկզբներին խիստ նոսրացած խումբը հասնելով Նապո գետի սփերին համոզվեց, վոր իրեն սպասում ե քաղցը: Այդ ժամանակ խմբի առաջնորդը վճռեց գետի հոսանքով հետախուզուլ Թյուճն ուղարկել: Վիճակն ընկավ անվեհեր նավաստի Որելլանոյին: Բանակ գցեցին և շտապ կերպով շինեցին մի փոքր յերկկայմ մարտանավ, վորով կարելի յեր գնալ ինչպես առագաստներով, այնպես ել Թիակներով: Վերցնելով իր հետ նավորդներից 50 հոգի, Որելլանոն առանց հապաղելու ճանապարհ ընկավ գետի հոսանքով, դեպի վար:

Գետի յերկու ափերին ել կանգնած եր լուռ, մութ անտառը: Շուրջը մարդկային վոչ մի հետք չեր նկատվում: Հզոր ծառերը միացնելով իրենց կատարները, հաղթական կամարների նման բաներ եյին կազմել գետի վրա: Ծյուղերից կախվել եյին պատուտակները, վորոնց փաթաթվել և ճոճվում եյին, ինչպես ճլորդու վրա,— պոչավոր կապիկները:

Բայց ահա գետեզրյան թանձր անտառն սկսեց քիչ-քիչ նոսրանալ: Լուսաբացին ծառերի արանքով նկատվեցին արմավենու տերևներով կամ խոտով ծածկված խրճիթներ, վորոնց մեջտեղում այստեղ ու այնտեղ նկատվում եյին վախեցած հնդիկները վորոնք իրենց կյանքում յերբեք սպիտակամորթ մարդիկ չեյին տեսել: Իր ուղեկիցների հետ ալի դուրս գալով, Որելլանոն հանգստացրեց վայրենիներին, հայտնելով նրանց իր խաղաղ գիտավորությունների մասին և հավաքեց պարենի բավական մեծ պաշար: Տեղացիները հայտնեցին, վոր աասն որվա ճանապարհի հեռավորությամբ, դեպի հարավ սկսում ե մի «մեծ քուր»:

Այժմ հարկավոր եր վճռել հետևյալ հարցը. վերագառնալ յետ դեպի Պիզարոյի ջոկատը նրան պաշարեղեն հասցնելու համար, թե՞ առաջ գնալ Կարճատե խորհրդակցությունից հետո ընդունվեց յերկրորդ վճիռը: Յետ դառնալու ճանապարհը խիստ յերկար ու դժվար եր և, բացի այդ, Պիզարոյի ջոկատը, միևնույն ե, քաղցածությունից ու ժապառ պիտի լիներ, չսպասելով իրենց հետախուզների: Իսկ այստեղ ճանապարհորդներին ժպտում եր,

իրավ է, մի անորոշ հուշս՝ հասնել Աստվանդյան ուղիհանութի ավեր-
ւինս Երևանցին մի յերկրորդ, ավելի ընդարձակ նավ, պատուտակ-
ներեց պարաններ հյուսեցին, իսկ խոտից, վոր տեղացիները գործ
եյին ածում հազուապի համար, կարեցին առաքատները:

Այդ ժամանակամիջոցում Պիղարբուն, իլուր սպասելուց հետո,
յեղրակացրեց, վոր Որեկանան և նրա ուղեկիցները վոչնչացել
են, և վորոշեց յեա վերադառնալ Կվխոտ: Մի կերպ պահպանելով
իրենց ուժերը — ձիերի, շների և սողունների մարդ, արմատներով
և կեղևներով — Պիղարբոյի մարդիկ աննկարագրելի ղփշարություն-
ներով հասան մինչև Կվխոտ — ընդամենը 80 հոգի: Չորս հազար
հնդիկներ և յերկու հարյուր սպիտակներ վոչնչացան այդ Հարա-
րատիկ ճամբորդության ժամանակ:

Իսկ Որեկանան պաշարով բարձեց յուր յերկու նավը և, տեղա-
վորելով նավորդներին, շարունակեց իր ճանապարհը յերկրագնդի
ամենամեծ արևադարձային դաշտավայրի միջով և մեծագույն
գետի ավազանում: Ինչպես ասել եյին հնդիկները, ճանապարհորդ-
ները տասն որից հետո հասան Վմեծ ջրին, վորտեղ նապոն
թափվում եր Ամազոնի մեջ: Հզոր գետն այդ ժամանակ զտնվում
եր հեղեղման շրջանում: Հունիսին և հուլիսին գետի ջուրն այդ-
տեղ բարձրանում և յուր սովորական մակերևութից ամբողջ 12
մետրից ավելի: Հոսանքով ներքև այդ տարբերությունը հավա-
սարվում է, վորովհետև Ամազոնի հյուսիսային վտակները գալիս
են հասարակածից, վորտեղ անձրևներ գալիս են տարվա բոլոր
յեղանակներին, մինչդեռ հարավայիններն ավերը հեղեղում են
տարբեր ժամանակներում, նայելով տեղին, վորտեղ զտնվում են
նրանց ակունքները:

Սպանացիներին թվում եր, թե նրանք լողում են անսահման,
սահալին լճի վրա: Այնտեղ, վորտեղ ավերը հարթ եյին, անտառը
հեղեղվել եր տասնյակ կիլոմետր տարածությամբ: Վայրի դա-
շանները փախչում եյին յերկրի ներսը, ավելի ապահով տեղեր,
և անտառում մնում եյին միմիայն լողացող և անտառային թռչուն-
ները, իսկ չորքոտանիներից միայն նրանք, վորոնք իրենց կյանքը
սովորաբար անց են կացնում ծառերի վրա: Մի քանի տեղերում,
ուր ջուրը չեր հասել, յերբեմն պատահում եյին հնդիկների
խրճիթներ:

Յերբ ջուրը նվաղեց, ճանապարհորդները հնարավորություն
տեսցան դիակելու ավերի փլածքները. ջրով հագեցած և վողող-
ված հողի կոշտերն, իրենց վրա աճած հսկայական ծառերի հեռ

միասին, ցած էյին գլորվում և թափվում գետը: Հողը, ծառերի արմատներն ու բները, ինչպես նաև պատուտակները, վորպես վիթխարի գնդեր, տարվում էյին գետի հոսանքով. ծանծաղ տեղերում նրանք կուտակվում էյին և կազմում ամբողջ կղզիներ, իսկ տեղ-տեղ ել կախ էյին ընկնում փլվածքներից, սպառնալով ամեն ըոպե վայր գլորվել: Յուրաքանչյուր ըոպե կարելի յեր յերկյուղ կրել, վոր նավերը կդիպչեն ստորջրյա ճյուղավոր ծառերին կըըջվեն և կերթան հատակը: Հոսանքի արագությունը մի վայրկյանում հասնում եր ³/₄ մետրի:

Մայիսի վերջին սպանացիք հասան այն տեղին, վորտեղ Ռիո-Նեգրոն թափվում ե Ամազոնի մեջ: Այն վտակը, վոր հավաքում ե իր ջրերը Կոլումբիայից, Վենեսուելայից, Գվիանայից և լիանոսներից*, վորոնք ընկած են Ամազոնից դեպի հյուսիս, խիստ մեծանում ե նրա հզորությունը: Այդտեղից սկսած գետն այն տեղերում, վորտեղ կղզիները բաժանում են նրան առանձին վտակների, հասնում ե 50 կիլոմետր լայնության: Այստեղ Որելլանան անցկացրեց մի քանի շաբաթ, ոգտվելով հնդիկների ցույց տված հյուրասիրությունից:

Նա վերանորոգեց իր նավերը, հավաքեց պարենի մեծ պաշարներ, բարձելով յուր նավերը մախսով**, հավերով, ձկներով և կրիաներով: Ձկներով և կրիաներով պարենավորվելը վոչ մի դժվարություն չեր ներկայացնում, այդտեղ վխտում էյին ուտելու կրիաներ, իսկ գետում աճում ու բազմանում էյին մոտ 2000 զառազան տեսակ ձկներ:

Այսպես ճանապարհորդներն անցան անսահման արևադարձային անտառի միջով, վորը տարածվում ե Անդյան լեռնաշղթայի ստորոտներից և Մադեյրայի ակունքներից մինչև Որինոկոյի և Ամազոնի գետաբերանը, այդ՝ իր փարթամությամբ ապշեցնող ծառերի կոմպլեքսի միջով, վոր սելվաններ և կոչվում և լսնում ե Բրազիլիայի ամբողջ ցածրությունը: Անձրևի ջուրը, վոր արեւվադարձային հեղեղների ժամանակ ասենայն առատությամբ թափվում ե սելվանների և լիանոսների ամբողջ տարածության վրա, վազում ե այստեղ հոսող բազմաթիվ գետերով դեպի Ամազոնը, իսկ այնտեղից—ովկիանոսը: Հսկայական գետը յուր ափերին ըն-

* Անապատներ հարավային Ամերիկայում, վորոնք մասամբ ծածկված են խիտ ու բարձր խոտով, մասամբ ել թռչող ավազով:

** Բույս, վոր աճում ե գլխավորապես տաք յերկրներում. այլ կերպ սիմիդր:

նախագգութեան անկումը, վերջին տարիներին (մականխութեան և տեղատնտեսութեան առնչութեամբ) հակառակ կողմերէն ուժ ունեցող վիթխարի ալիք եւ բարձր-նումը Շուտով Որեւիտեան հասարակ Ամաղոնի դեպքի հետեւեալին յաջողութեամբ:

Իրենց բրիգանտինները վրա տախտակամած շինելով, Որեւ-լանն առաջադրեալով դուրս յեկալ բաց ծով: Սակայն, ծովի վրա դեռեալ յերկար ժամանակ նկատելի յեր հզոր գետի ազդե-ցութեամբ:

Ափերը վաղուց արդեն չքացել էին աչքից, իսկ նավերը լո-զում էին մութ-գեղնադուր ջրում, վեր ծով եր տանում Ամա-ղոնը. միայն գետաբերանից 500 կիլոմետր հեռավորութեան վրա Ամաղոնի անուշահամ ջրերը փոխարկվում եւ վերջապէս ովկիանո-սային աղի, կապտադուր ջրի:

Հինդ ամիս զործադրեց Որեւիտեան՝ Ամաղոնի վրայով 4000 կմ անցնելու համար: Այժմ նա ուղղվեց դեպի հարաւ, Գլխանայի եւ Վենեցուելայի ափերի յերկարութեամբ եւ վերջիվերջո խարխա-ծեց Սանդո-Դոմինգոյի ափի մոտ:



ԱՂԵՔՍԱՆԳԻ ՀՈՒՄՐՈՒԳ

Աղ. Հումբոլդ

Նրանից հետո, յերբ ավագակ Պիզարրոն կործանեց ինկերի* թագավորութիւնը, սպանական և պորտուգալական կոնկվիստադորներն իրենց գիշատիչ հայացքները դարձրին զեպի Հարավային Ամերիկայի մայր ցամաքը, վորի անծայր ընդարձակութեան մասին վոչ գաղթականները և վոչ ել աշխարհագրագետները վորեւ գաղափար ունեյին: Հնդիկ ազգաբնակիւթիւնը կատաղի կռիւից հետո ստիպւած յեղաւ աստիճանաբար քաշվել յերկրի խորքերը, վորտեղ անանցանելի կուսական անտառներն իրենց սոսկալի ջերմախտով և անվերջ չոր տափաստանները, լյանոսներն ավելի լաւ, քան վորեւ գենք, պաշտպանում եյին նրանց՝ յեվրոպացի գիշատիչներէից: Ծովափնյա շերտերն արագորեն յենթարկվեցին բնակեցման ու գաղութացման, ունենալով յեվրոպացիներէից, կրեոլներէից, հնդիկներէից և մուլատներէից — յեվրոպացիների և նեգրերի խառնուրդ, — կազմված խառն ազգաբնակիւթիւն:

Մայր ցամաքի խորքերը մեծ գետերի հոսանքով սպիտակներէից թափանցել եյին միայն միսիոներները — յեղվիտները և կուսակրոն-կապուցիները, բայց մոծակները, կոկորդիլոսները, մըր-

* Ինկեր—Պերույի թագավորները, վոր գերիշխեցին Պերույում 500 տարի մինչև սպանացիներին ներխուժումն այնտեղ:

Չյուններն ու հոգադները թունավորում էյին և այն սակավաթիվ յնվորապայինների կյանքը, վորոնք մշտական բնակություն էյին հաստատել այնտեղ, և ահա նրանք ևս խնդդվում էյին իրենց շըրջապատող փարթամ բուսականության մեջ: Փայտն խաչի շուրջն արժավենուց շինված խրճիթները և նրանց արանքում միախոններների բամբուկյա տունը հպարտորեն քաղաքներ էյին կոչվում և նրանց անունները նշանակվում էյին աշխարհագրական քարտեզների վրա, գետերի և քաղաքների ֆանտաստիկ ուրվագծերով, իսկ Ապանիայի և Պորտուգալիայի գիվանագետներն իրենց ամբողջ ճարպիությունը գործ էյին դնում, իրենց հեռավոր տիրապետությունների սահմանները վորոշելու համար տեղի ունեցած վեճերում, տիրապետություններ, վորոնց վաստորեն վոչ վոք չեւ ճանաչում և վորոնց իսկական տերերը մնում էյին հարավ-ամերիկական տեղացիներն ու գաղանները:

Այդպես շարունակվում եւ մինչև 18-րդ դարի վերջը, յերբ յերևաց մեկը, վոր վերցրեց այդ յերկրի խորհրդավորության քողը: Այդ մարդն Ադեֆանդը Հումբոլդն եւր: Հինգ տարի մնալով Հարավային Ամերիկայում, նա թափանցեց այդ ցամաքի խորքերը, հետեւեց այդտեղ հոսող գետերի ընթացքին, գծագրեց լեռներն ուրվագծերը, ուսումնասիրեց բուսական և կենդանական աշխարհները, կլիմայական պայմանները, յերկրաշարժերն ու հրաբխային յերևույթները, սահմանեց շատ տեղերի համար աշխարհագրական յայնությունն ու յերկարությունը և մետրոպոլիաներին տվեց շատ արժեքավոր ցուցմունքներ՝ գաղութացման գործի ռացիոնալ գրութի համար: Այս ճանապարհորդության համար Հումբոլդը ծախսեց իր խոշոր կարողության մոտավորապես կեսը, 100 000 մարկից ավելի, սակայն դրանով նա անմահացրեց իր անունը մարդկային կուլտուրայի պատմության մեջ:

Հումբոլդն իր ճանապարհորդությանը ձեռնարկեց 30 տարեկան հասակում, յերկար տարիների գիտական նախապատրաստությունից հետո: Նրա ընկերն եւ ֆրանսիացի բուսաբան Բոնպլանը:

1799 թ. հուլիսին յերկու ճանապարհորդներն իջան Կոլմանս (Վինեցուելա), այստեղից ուղեորվեցին գեպի շրջանի մայրաքաղաք Կարակասը, մտադրվելով այնուհետև լյանոսների միջով ուղեվորվել գեպի Ուինտիկո, վորն իր մեծությամբ Հարավային Ամերիկայի գետերի թվում յերրորդն է: Ծովափնյա առողջարար կլիմա ունեցող շերտում ապրելով, հնարավորություն ունեցան ընտե-

լանալու արևադարձային կլիմային և հավաքելու հարուստ ու արժեքավոր կոնկրետներ, գլխավորապես բուսաբանական: Այստեղ չոր և ավազոտ տափաստաններում աճում ելին շատ հետաքրքիր բույսեր: Վայելչակազմ կակտուսները տարածվում ելին շուրջանակի և կազմում անանցանելի թավուտներ: Գետերի ափերին ծաղիկներով ծածկված պատուտակները, փաթաթվելով փառահեղ տաժարինին և ուրիշ ծառերին, կախվել ելին նրանցից փարթամ, յերփներանգ ծաղկաշթաններով: Սազոյի* ծառը, բանանի թուփը և կակաոի ծառը ապահովում ելին ծուլ տեղացիների անտրտում գոյությունը: Յեզիպտացորենն ու շաքարեղենը համարյա թե վորևե խնամք չեյին պահանջում: Արմավենիների ծաղիկներն ու տերևները նրանց տալիս ելին հազուստի համար հրաշալի նյութեղեն, իսկ բամբակի բները ծառայում ելին և՛ խրճիթներ շինելու, և՛ զենքեր պատրաստելու, և՛ տնային կարասիների համար: Բայց ամենից շատ ճանապարհորդներին զարմացնում եր «կաթի ծառը»: — «Լերկ ապառաժոտ ժայռի վրա, — ասում ե ձուժբոլոր, — աճում ե չոր, կաշնման տերևներով մի տեսակ ծառ. նրա հաստ, փայտանման արմատները հաղիվ թափանցում են ժայռոտ հողի մեջ: Տարվա ընթացքում մի քանի ամիս շարունակ ծառի տերևներն անձրև չեն ստանում և արմատները թվում են բոլորովին չորացած ու մեռած: Բայց յեթե գայլիկոնով ծակինք բունը, նրանից կսկսի հոսել քաղցր, սննդաբար կաթ: Ամենից առատ հյութն արտադրվում ե վաղ առավոտյան արևածագի ժամանակ. այդ պահին ամեն կողմից ծառին մոտենում են տեղացիները և սկամորթները՝ մեծ գավաթներով և սկսում են հավաքել կաթը, վորն արագորեն դեղնում և թանձրանում ե: Վոմանք գավաթները դատարկում են հենց այդտեղ, ծառի մոտ, վոմանք ել կաթը տանում են յերեխաների համար:

Վոչ պակաս փարթամությամբ և բազմազանությամբ աչքի յե ընկնում ե ֆառնան: Թփուտներում կարելի յե հանդիպել հովաղի, վոր զգուշորեն, գաղտադողի մոտենում ե վորսին, իսկ ճահիճների և ծովալճակների տղմոտ ափերին, վոր դոյանում են ամառվա հեղեղներից հետո, տառնյակներով պռկված ելին կոկորդիլոսները՝ յերախները բաց և առքանում արևի աակ: Զանազան ցեղի կապիկների անթիվ անհամար խմբերը կենդանացնում ելին

* Արմավենու մի տեսակը: Ծ. Բ.

անառառն իրենց աղմուկ-աղաղակով, իսկ Թանձր Թավուտներում, ճահիճներում մեծ բազմությամբ վլատում ելին ամեն տեսակ ճահ-
ճային թռչուններ:

Բայց ամենից հետաքրքրականը Կարապետի շրջակայքում
գտնվող գուռախարո աշրն եր: 23 մետր բարձրության վրա գրա-
նվող այդ աշրը դնում է բավական հեռու՝ լեռան խորքը. նրա
մեջ բուն են դնում հաղաբավոր խոշոր, գիշերային, այսպես կոչ-
ված՝ գուռախարո թռչունները. նրանց թևերի Թավը հասնում է
մի ամբողջ մետրի Սյդ թռչուններն իրենց պսակի ձև ունեցող
բները կպցնում են աշրի պատերին: Հովհաննու տոնի որերին,
յերբ վոքրիկ թռչունները միանգամայն ընդունակ են դառնում
թռչելու: աշրն են դալիս միախոնները և հնդկներն ու սկսում
յուրատեսակ վորսը. յերկար ձողերի ողնությամբ նրանք բները
պոկում են ժայռերից, բունում են ջահել թռչուններին և սպանում՝
չնայելով նրան, վոր ծնողները հուսահատորեն պաշտպանում են
իրենց նուտերին: Հենց այստեղ ևլ մեծ խարույկներ են պատրաս-
տում, և սկսվում է ավարի մշակումը: Թռչունների իրանի ներքևի
մասում կան մեծ ճարպային ուռուցքներ և հենց դրանց համար
ևլ կատարվում է վորսը: Հնդկների համար այդ ճարպային մա-
սերը ծառայում են վորպես համեղ ճաշ, իսկ միախոնները, բացի
այդ, ճարպից պատրաստում են յեկեղեցական մոմ: Չնայած այդ
թռչունների անխնա, մասսայական վոչնչացման, այնուամենայ-
նիվ վորսի մսի պաշարը չի վերջանում և վորսորդներն ամեն
տարի բավարար քանակությամբ ունենում են այն:

Իսկևս մինչև Ամերիկա գնալը Հումբոլդը հետաքրքրվում եր
կենդանի որդանիզմի մեջ կատարվող ելեկտրական յերեույթնե-
րով: Այնտեղ գիտողությունների և վորձերի համար, այդ ուղղու-
թյամբ, յերիտասարդ գիտնականներն ամենալայն հնարավորու-
թյուններն ունեյին: Վենեզուելայի լյանոսների ծովաճակներում
վլատում ելին ելեկտրական ինչ վոր ելակներ. տոկի ուժը, վոր
նրանք արտադրում են, այնքան մեծ է, վոր կենդանիների և
մարդկանց համար լուրջ վտանդ է ներկայացնում: Տեղացի հըն-
դիկները հասկանալի յերկյուղ են կրում այդ կենդանիներից:
Հումբոլդը մեծ դժվարությամբ կարողացավ համոզել նրանց՝ ցույց
տալ այդ կենդանիների բնակվելու տեղը: Բայց լինչպես ձեռք բե-
րել այդ կենդանիներին: Հնդիկների խորհրդով ծովաճակը մրտց-
րին մոտ յերեսուն ջորի: Անհանգստացած անակնկալով և հըն-
դիկների բարձրացրած աղաղակներից, այդ կենդանիները հար-

ձակվեցին ջորինների վրա և սկսեցին անընդհատ հարվածել նրանց: Վախեցած և դողացող ջորիները, հարվածներից շշմած, ընկան և խեղդվեցին: մյուսները, յերկուրդով բռնված, աշխատում էին դուրս գալ ցամաք, բայց հնդիկները կրկին քշում էին դեպի ջուրը, վորտեղ նրանք դարձյալ յենթարկվում էին այդ կենդանիների հարձակմանը: Մի քանի րոպե անց, կենդանիների ելեկտրական ենթերգիան սպառվեց, և նրանք թուլանալով աշխատում էին դուրս գալ ցամաք, վորտեղ և կարելի կլիներ բռնել նրանց առանց ռիսկի յենթարկելու իրեն: Այդ կենդանիների վրա կատարած փորձերը յերկու հետադոտողների մեջ ել առաջ բերին սըրտախառնութուն և մկանների թուլութուն: Մի անգամ Հումբոլդն անզգուշությամբ վոտքով դիպավ այդ կենդանիներից մեկին և այնպիսի հարված ստացավ, վոր յերկար ժամանակ ցավ եր զգում իր անդամների մեջ:

Դսան որ տեսց լյանոսների միջով անցնելը, մինչև Որինոկո գետի վտակ Ռիո-Ալուերիյի վրա գտնվող այն կետը, վորտեղից Հումբոլդն իր արշավախմբով մտադիր եր սկսել ճանապարհորդությունը ջրային ճանապարհով: Դաշտավայրը, — բուրբուլին հարթ և թփերից ու ծառերից զուրկ, վորոնց ստվերում կարելի կլիներ պաշտպանվել արևի ուղղահայաց կիզիչ ճառագայթներից, — տխուր եր ու միապաղաղ: Դիչ եր մնացել, վոր ճանապարհորդներն այստեղ զոհ գնային իրենց անզգուշության:

Ճանապարհին նրանք ամբողջ յերկու որ ձիուց ցած չիջան, իսկ ցերեկը, սպանիչ շողի պատճառով, քնի մասին մտածել անգամ չեր կարելի: Վերջապես նրանք հասան մի մենավոր տուն, վորտեղ, իր ծառաների հետ, ապրում եր անասնապահ Ֆերմերը: Յեղները, ձիերն ու ջորիներն արածում էին շրջակայքում բացությա, իսկ հովիվները դես ու գեն էին էին գնում ձիերով, ժամանակ առ ժամանակ քշելով նախիրը, յերբ բավական հեռու յեր գնում այն: Ճանապարհորդների հուշները, — այդտեղ կաթ ձեռք բերել, — չարդարացան: Միակ բանը, վոր հաջողվեց նրանց ձեռք բերել այդտեղ, շատ քիչ քանակությամբ վատ ջուրն եր, վոր հազիվ պետք կզար ծարավը հաղեցնելու համար: Զորինների բռնները վերցրին և աղատ թողեցին, թույլ տալով, վոր իրենք իրենց խումբում ջուր գտնեն: Կենդանիները մի րոպե հոտոտեցին ողբ և հետո նետի պես սլացան դեպի մի փոքրիկ լիճ, վորի մեջ դեռևս պահպանվել եր քիչ քանակությամբ ջուր:

Հումբոլդը և Բոնպլանը հետևեցին նրանց, միտք ունենալով

լողանալ լճի մեջ: Բայց հազիվ մտել էյին ջրի մեջ, յերբ իրենց մօտ տեսան մի վիթխարի կռկռողիլոս: Ստիպված յնդան դադարեցնել լողանալը և շտապով աղատվել փախուստի դիմելով: Որն արագ կերպով մթնում եր, Ժամանակ եր ֆերմա վերադառնալու: Բայց շուրջը բնակութեան վոչ մի նշան չեր նկատվում: Ճիշտ է, ճանապարհորդները կողմնացույց ունեյին, բայց և վոչ մեկը չեր նկատել, թե ինչ ուղղութեամբ էյին հեռացել տնից: Հարկ յնդամ գնալ յնթադրաբար: Իդուր նրանք ուշադրութեամբ դիտում էյին հորիզոնում բռնկած կրակները: Դրանք մայր մոտոդ աստղեր էյին, վորոնց լույսը գոլորշիացման աղբեցութեան տակ ձեռք եր բերել կարմրագույն յերանդ և նման եր խարույկի լույսին: Վերջապես ուժասպառ յեղած ու ծարավից տանջված ճանապարհորդները վորոշեցին կանդ առնել և սպասել լույսը քաղվելուն: Բայց ահա մեռելային լուծեյան մեջ լսելի յնդան ձիու վոտնաձայներ, և շուտով ճանապարհորդները տեսան նիզակով դինված մի հնդիկ: Նա հովիվներից մեկն եր: Յերկու սպիտակներին տեսնելուն պես հնդիկն սկսեց փախչել, և ճանապարհորդները մեծ դժգարութեամբ միայն կարողացան կանգնեցնել նրան և խնդրեցին առաջնորդել մինչև ֆերման:

Այս արկածից հետո Հոմբոլդը և Բոնպլանն սկսեցին ավելի շրջահայաց լինել: 1800 թվի մարտի 27-ին նրանք բարեհաջող կերպով հասան Ռիո-Ապուրիում գտնվող Սան-Ֆերնանդոյի կապուչինական միսսիան:

ՈՐԻՆՈԿՈՅԻ ՎՐԱ

Մինչև Հոմբուրգի եքսպեդիցիան Որինոկո գետի սիստեմայի մասին գոյություն ունեյին շատ անորոշ պատկերացումներ: Բընության մեջ յեղած այն չափազանց բացառիկ փաստը, վոր այդ գետն իրենից մի ճյուղ և ուղարկում Ամազոնի վտակ Ռիո-Նեգրոյին, վորի շնորհիվ և յերկու գետերն ել ունեն յուրատեսակ ջրանցք, — շատ գիտնականների կողմից ժխտվում ու դիտվում եր վորպես հասարակ մտացածին բան: Հոմբուրգն առաջինն եր, վոր առանց տարակուսանքի ապացուցեց այդ փաստը, հաստատելով վերը նշած Որինոկոյի որիգինալ ճյուղավորության գոյությունը և բռնելով Կասսիկվիարիյի ուղղությունը, վոր Հարավային Ամերիկայի յերկու գետային սիստեմներ կապող ողակն ե:

1800 թ. մարտի 30-ին Հոմբուրգը յուր ընկերներով Սան-Ֆերնանդոյից մեկնեց վար, Որինոկոյի վտակ Ռիո-Ապուերիյի հոսանքով: Լայն նավակի յետևի մասում նավասենյակի պես մի բան շինեցին, սեղանով և նստարաններով, չորս շաբաթվա պարենի պաշար պատրաստեցին, դիտավորապես բանաններ՝ ղեկավարի և չորս տեղացի թիավարների համար, ինչպես նաև ողի՝ հնդիկներին հետ փոխանակելու համար: Հզոր գետի հոսանքն արագ վերցրեց նավակը, և շուտով ճանապարհորդներին իր գրկի մեջ առավ փառահեղ արևադարձային անտառը:

Վեցերորդ որն եքսպեդիցիան հասավ Որինոկոյին: Այդտեղից սկսվում եր ճանապարհը գետնիվեր: Գիտնականների առաջ աչքը կտրածին չափ տարածվում եր մի անվերջ ջրային մակերևույթ: Գետի յերկու ափերին տարածված կուսական անտառը նահանջում եր դեպի հորիզոնի ծայրը: Ենկարամանդայի մոտ, ափերին մոտենում եյին լեռները, և գեղազրական ապառաժները ծածկվում



Ազ. Հումբոլդթը Հարաժա Եին Ամերիկայի կուսական անասուններու:

եյին փ արթամ քւ ւսականությամբ, վորոնք կախված էյին ժայռոտ պ արսպից շքեղ գորգի պես, միայն ժայռերի կատարներն էյին մերկ քնում, հիշեցնելով ինչ վոր յերևակայական ամրոցի ավերակնն ք: Գետի մեջ պատահում էյին բազմաթիվ կղզիներ:

Թաւ քւ, քարեհաջող քամին հեշտացնում էր առաջ գնալը: Պատահում էյին, իհալ կե, և անհաջողություններ: Այսպես, մեկ անգամ սա ստիկ ուժեղ քամին քիչ քնաց շուռ տար նաւը, վորի հետևանքով և ջրի յերեսին պետք է լողային ճանապարհորդները: Գրքերն ու որագրերը: Բարեբախտաբար առագաստը պատուեց և դժբախտության առաջն առնվեց: Նաւի ղեկավարն, ի պատասխան անփութ լիւրտակաւ համար ստացած հանդիմանության, շատ հանդիստ կերպով հայտարարեց, վոր սպիտակներն իզուր են անհանգս տանում: արեւ վառում է քաւական ուժեղ, և սպիտակների թ ղթերը շուտով կչորանան... Տաքության սակաւության համար, իրավ է, ճանապարհորդները գանգատվել չէյին կարող, սակայն լաւ խմելու ջրի պակասը խիստ զգալի յեր, հատկապես այն դեպքերում, յերը ճանապարհորդները պետք է քնէյին վոչ թե ցամաքի վրա, այլ նաւակի մեջ. գետի պղտոր, տաք ջուրը լաւ չէր հագեցնում ծարավը:

Ճանապարհին պատահում էյին վայրենի հնդիկների փոքրիկ գյուղեր: Նրանք շրջում էյին բոլորովին մերկ, և նրանց ամբողջ մարմինը նախած էր կարմիր նկարներով: Զի կարելի ասել, վոր այդ պրիմիտիւ արդուզարդը եժան էր նստում նրանց. կարմիր ներկի արժեքը, այսպես կոչված ոնոտոն, վոր անհրաժեշտ է ամբողջ մարմինը ներկելու համար, հովասար է նրանց յերկու շաւրածվա աշխատավարձին — միսիոնարների իջևանում, կամ թե չե յեւրոպացի գաղութատիրոջ ֆերմայում:

Ռիո-Մետայի լայն գետաբերանից վեր Ուինոկոն ուներ մոտ 5 կիլոմետր լայնություն. այդտեղ Ատուրես և Մատուլլես ահագին սահանքները փակում էյին ճանապարհորդներին ճանապարհը: Հումրուդն ստիպված յեղաւ փոխել իր համեմատաբար հարմար նաւը հնդիկների նեղ մակույկի հետ, վորի յերկարությունը 13 մետր էր, իսկ լայնությունը ընդամենը մեկ մետր: Այդպիսի նաւակում տեղավորվել, տեղավորեցնել նաև գրքերը, թղթերը, հերբարիումը և կոլեկցիաները, ինչպես նաև վանդակներ՝ կենդանի կապիկներով և թռչուններով ու պարենի պաշարը — քաւական դժվար գործ էր: Զարմանալի չե, վոր գետի ափին յուրաքանչյուր կանգ առնելն ու բացոթ յա իջևանելը, վողջումում էյին, վոր-

պէս գերութեանից ազատվելու փաստը Այդալիսի պարագաներում
Հումբոլդը սովորեց չոքած վիճակում գրել և այդ սովորութեանը
նա պահպանում էր մինչև վերջին ժամանակներս՝ Բեռլինի յուր
աշխատանոցում աշխատելու ժամանակ։

Սահանքներին մոտիկ միսսիայի վանահայր Բերնարդո Զեա-
քահանան, զոր եքսպեդիցիային նալ հայթայթեց և միացած ճա-
նապարհորդներին, հետադաշում շոշափելի ծառայութեաններ մա-
տուցեց հետազոտողներին, հատկապէս հնդիկների հետ բանակ-
ցութեաններ վարելիս։ Սահանքների միջով անցնելը տեղեց 14 ուր
և կապված էր մեծամեծ դժվարութեանների հետ. տեղ-տեղ դուրս
ցցված ժայռերի միջև ընկած տարածութեանն այնքան աննշան
էր, զոր նախկը խրվում էր նրանց մեջ տեղում և պետք էր լի-
նում քարշէլ պարաններով կամ թէ չէ հանելով ափ, քարշ տալ
ցամաքի վրա։ Կարճատե հանգստից հետո ճանապարհորդները
շեղվեցին ճանապարհից և զիմեցին զեպի Որինոկոյի Ատաբապո
վտակը, իսկ հետո զեպի վերջինիս վտակ Ռիո-Թեմին և բարձրա-
ցան զեպի վեր, այդ զեպի հոսանքով։ Այդ ժամանակ զետը վա-
րարել էր և ճանապարհորդները հաճախ գնում էին արևադար-
ձային անտառի ամենախիտ թափուտներ մեջ ընկած նեղ ջրանցք-
ներով, մինչև հասնում էին այն տեղին, վորտեղ պետք էր ցա-
մաքային ճանապարհով դուրս գալ Որինոկո զեպի ալազանից—
Ռիո-Նեգրոյի ալազանը, ինչպէս սովորաբար վարվում էին տե-
ղական հնդիկները. Հումբոլդի նախկը Ռիո-Թեմիից (Որինոկոյի
ալազանը) փայտյա նիղերի վրայով առաջ տարվեց զեպի Պի-
միսին զետակը (Ռիո-Նեգրոյի ալազան). սրա համար հարկավոր
յեղով հինգ որ Պիմիսինի վրայով 5 ժամ զնալուց հետո, Հում-
բոլդը յուր ուղեկիցների հետ հասավ Ռիո-Նեգրոյին, վորը Ամա-
զոնի ամենապլնավոր վտակներից մեկն է։

Մայիսի 10-ին Հումբոլդը հասավ այն տեղին, վորտեղ Կաս-
սիկվիարին դուրս գալով Որինոկոյից, հյուսիսային կողմից թափ-
վում է Ռիո-Նեգրոյի մեջ։ Ճանապարհորդները տասն որ շարու-
նակ լողում էին նրա ուժեղ հոսանքի հակառակ և վերջիվերջո
կրկին հայտնվեցին Որինոկոյում։ Այդպիսով Հումբոլդը անժխտելի
կերպով հաստատեց Ամազոն և Որինոկո զետերի սիստեմների
մեջ գոյութեան ունեցող ընտան կապը, իսկ դրանից հետո գտավ
այդ հետաքրքիր, բայց մինչ այդ հանելուկային մնացած նախկին
ֆենոմենի բացատրութեանը։ Որինոկոն մի տեղում ունենալով
700 մետր լայնութեան, զարկվում է ժայռոտ սահանքին, վորը և

բաժանում է գետը յերկու ճյուղի. ջրի գլխավոր մասսան պահպանում է իր նախկին ուղղութիւնը—դեպի հյուսիս-արեւմուտք, իսկ մյուս ճյուղը, առաջինից մոտավորապես յերկու անգամ նվազ, թեքվում է դեպի ձախ, և վորովհետև այստեղ սկսվում է Ռիո-Նեգրոյի թեքութիւնը, ուստի ջրի ամբողջ մասսան չի վերադառնում այլևս դեպի գլխավոր գետը, այլ թափվում է Ռիո-Նեգրոն:

Հումբոլդը շատ եր ցանկանում թափանցել մինչև Որինոկոյի այդ չհետազոտված ակունքները շրջանը, բայց այդ տեղերում ապրում էյին պատերազմասեր հնդիկներ, վորոնք վոչ վոքի թույլ չեյին տալիս մուտք գործել իրենց տիրապետութեան սահմանները: Գետի ամենանեղ մասում նրանք պատուտակներից հյուսած կամուրջ էյին ձգել և պահակները գիշեր ու ցերեկ հսկում էյին ամեն բանի: Նույնիսկ գինվորական եքսպեդիցիան Հումբոլդից մի քանի տարի առաջ ստիպված է յեղել յետ դառնալ այդ տեղից, և հետազոտողը հարկ համարեց հրաժարվել յուր պլանից: Որինոկոյի ակունքները մինչև այսօր ել մնում են քիչ հետազոտված: Տենդը, վոր խիստ տարածված է այնտեղ, ինչպես նաև կուսական անտառների անանցանելի թափուտները և անթիվ, անհամար միջատները, ավելի հուսալի պահակներ են հանդիսանում այս տեղերում, քան հնդիկների ուղեկալութունները (Zac-maba), վորոնք գոյութիւն ունեյին այնտեղ Հումբոլդի ժամանակ, իսկ այժմ չքացել են:

Որինոկոյի հոսանքով դեպի ներքև գնալով, ճանապարհորդները մի ամսից հետո կրկին հասան այնտեղ, վորտեղ դռնվում էյին առաջ,—Արաբապո գետի ակունքի մոտ: Վերադարձի ճանապարհին Հումբոլդն այցելեց, ի միջի այլոց, և Ատարուիպի այրը, վորը վորպես գերեզմանատուն եր ծառայում հնդիկների Ատուտեցեղի մեռածների համար: Այս տխուր դամբարանում, ըստական խիտ անտառի մեջ Հումբոլդը հաշվեց տղամարդկանց, կանանց և յերեխաների՝ մոտ 600 լավ պահպանված կմախք: Կմախքներից յուրաքանչյուրը խնամքով պառկեցրած եր դամբարանի մեջ, վոր հյուսված եր արմավենու տերևներից: Ճանապարհորդներն ի մեծ տհաճութիւն ուղեկցող տեղացիների, կմախքներից մի քանիսը վերցրին իրենց հետ: 1800 թ. ոգոստոսին եքսպեդիցիան վերադարձավ Կումանա:

Դրանից հետո Հումբոլդը յուր ընկերոջ հետ չորս տարի ևս ապրեց Հարավային Ամերիկայում, 1902 թվի հունիսի 23-ին նա

բարձրացավ 6310 մետր բարձրություն ունեցող Զիմրորազո սարը (մինչև 5810 մետր), — անկորդային բարձրություն, վորին չեր հասել մինչև Հոմբուրգը և զոչ մի հետազոտող: Միայն խիստ խոր ան-
դունդը խանդարել եր նրան բարձրանալ 500 մետր ևս և հասնել
լեռան կատարին:

Հոմբուրգի նանապարհորդության արդյունքը յեղավ մի հակա-
յական գիտական աշխատություն, զոր ընդգրկում և իր մեջ 30
մեծ չափարոված հատոր: Այդ հեղինակության վրա Հոմբուրգն
աշխատել և մինչև 1827 թիվը—Փարիզում: Յուր կյանքի յերկ-
րորդ կեսը գիտնականն անց և կացրել Բեռլինում, վորտեղ գիտա-
մանկամարժական գործունեյության հետ միաժամանակ զբաղել
եր և աչքի ընկնող վարչական և գիվանագիտական պոստեր:

Վաթսուն տարեկան ծեր հասակում Հոմբուրգը ուսաց կայսր Նի-
կոլայ I-ի հրավերով մի նանապարհորդություն կատարեց Ռու-
սաստանում, վորտեղ զխալորապես ուսումնասիրեց Ուրալյան
լեռնաշղթայի շրջանը: Այդ ախանավոր հետազոտողը մեռավ 90
տարեկան պատկառելի հասակում:

ԳՐԱՆ-ՉԱԿՈՅԻ ՀՆԳԻԿՆԵՐԻ ԾՐՋԱՆՈՒՄ

1908 թ. յերիտասարդ շվեդացի Նրլանդ Նորդենշելդը, հյուսիս-արևելյան անցքը գտնող նշանավոր հետազոտողի վորդին, Ժամանեց Արգենտինայի մայրաքաղաք Բուենոս-Այրես*։

Այնտեղից նա յերկաթուղով անցավ հյուսիս-արևմուտք, մինչև յերկաթուղային գծի վերջին կետը, վորտեղ շփման մեջ մտավ Գրան-Ջակո կոչվող մեծ հարթության հնդիկների հետ (Անդեյից դեպի արևելք)։

Այնտեղ նա հնարավորություն ունեցավ դիտելու, թե ինչպես այդ յերբեմնի ազատ մարդիկ քարշ են տալիս իրենց խղճուկ գոյությունը սպիտակների շաքարի գործարաններում։

Այնտեղից հետազոտողը կուսական խիտ անտառների միջով անցնելով հասավ այն դեռևս ազատ տեղերը, վորտեղ բարձրանում ե ձյունապատ Կալիլեկվա սարը։ Այնտեղ գործարաններից և սղոցարաններից հեռու, դեռևս թագավորում ե յերկրի աստվածուհի Պահամաման, վորին տեղացի հնդիկները, վորոնք անվանապես քրիստոնյաներ են համարվում, մինչև այսօր ել զոհաբերություններ են կատարում։

Այդ շրջանի հնդիկներն ապրում են փոքրիկ քառակուսի խրճիթների մեջ, վորոնք շինվում են քարից կամ արևի տակ չորացրած աղյուսներից և ծածկվում խոտով։ Կայծակից պաշտպանվելու համար նրանք տանիքի վրա խաչ են կանգնեցնում։ Ուրիշ փորձանքներից, ինչպես նաև հիվանդություններից նրանց պաշտպանում են իրենց հովանավորներն ու բժիշկները։ Վտաքերի

* Իլուզե-Լա-Պլատայի հարավային ափին, ամենախոշոր քաղաքն ե Հարևաներիկայի (մոտ $1\frac{1}{2}$ միլ. բնակիչ)՝ Մ. Թ.

ցամփե աշդպիսի բժիշկը բժշկում ե տապիրի, արջի կամ հովաղի նարպով։ Յերկրաշարժի դեպքում կազմակերպվում ե ուխտագնացութիւն զեպի դերեղմանատուն, վորտեղ աղոթում են, իսկ կարկառահարութեան ժամանակ այրում են խաչի ձևով փաթաթած արմավենու տերեւներ։

Հետո Նորդենշելդն ուղեորովեց զեպի հյուսիս՝ Պիլկոմայո մեծ գետը, վորն սկիզբն ե առնում Անդլան լեռնաշղթայի արևելյան լանջերից ե իր ջրերի հետ տանում ահագին քանակութեամբ տիղմ Դրան-Չակոյի հարթութեան միջով։ Տարվա չոր ժամանակ քամին բարձրացնում ե այդ արդմը ե փոշու ամպեր ցրում շրջակայքում։ Հենց այդ ժամանակ հնդիկները, վորպեսզի համեղ ճաշ ձեռք բերեն—գաշտային մկներ,—հրդեհում են պրերիաների՝ չորացած խոտը, ե կրակը տարածվում ե հսկայական տարածութեւններով, վոչնչացնելով յուր ճանապարհին արմավենու պուրակներն ու փաթաթած անտառները։ Անձրեւների շրջանն այստեղ սկսվում ե նոյեմբերին կամ դեկտեմբերին ե շարունակվում ե մինչև ապրիլ կամ մայիս ամիսը։ Տեղական հնդիկների զլխավոր, համարյա բացառիկ անունըը ձուկն ե կազմում, վորն ահագին քանակութեամբ վխտում ե գետում։

Հազիվ թե վորեւ ուրիշ սպիտակի հաջողված լիներ յերևես այնպես մերձենալ վայրենուն ե այնպես թափանցել նրա հոգերանութեան մեջ, ինչպես այդ հաջողվել ե Նորդենշելդին։ Նա հնդիկների վրա բարձրից չէր նայում, այլ վերաբերում էր նրանց, ինչպես հավասարը հավասարին։ Վայրենիներն ել իրենց կողմից նրան վերաբերվում էին անսահման վստահութեամբ, ե նա միշտ ել ցանկալի հյուր եր յեղել նրանց խրճիթներում։ Յեթե յերիտասարդութեւնը գետի ափին բացութեա պարեր եր կազմակերպում խաբուշի շուրջը, նա մասնակցում եր այդ պարերին։ հնդիկների նման նա զարդարում եր զլխի փաթիթոցը գույնզգույն փետուրներով, ազգրերի շուրջը գոպնոց եր կրում, գաջում եր յուր մորթին, ախանջ եր դնում հնդիկների լեզենդներին ե ռազմական յերգերին։ Նա խոսում եր նրանց լեզվով, ուսում ե խմում եր նրանց նախնական անոթներով։ Մի խոսքով, նա զարձել եր սպիտակ հնդիկ, կամբամորթների հետ միասին նա ձուկ եր վորսում գետում, թափառում եր անտառներում, մասնակցում եր գազանների ե թռչունների վորսին, իսկ յերեկոները, աշխատանքի

* Պրերիա—սեռնոց խոտավետ տափաստան Հյուս. Ամերիկայում։

«ըվա վերջանալուց հետո, յերբ տղամարդիկ հաղաղ նստում եյին շուրջանակի և ծխում ընդհանուր ծխամորճ, նա նստում եր նրանց շարքում և սպասում, թե յերբ հերթն իրեն կհասնի: Չոր հետեւում նրանց միմիայն «կովի շավղով»: Շատ անգամ եր նա տկա- նատես յեղել հնդիկները տարբեր տոհմերի և ցեղերի մեջ տեղի ունեցած արյունահեղ ընդհարումներին: Կարմրամորթները շատ անգամ են փորձել համոզել նրան, վոր նա մոսնակցի նման պա- տերազմական ձեռնարկություններին, խոստանալով ավարից մաս հանել նրան: Բայց, ի մեծ զարմանա նրանց, իբրև ավար նրան- ցից ձիեր, գերիներ, գանգամաշկեր (СКАЛЫНЬ) ստանալու հեռա- նկարները չեր գայթակղեցնում սպիտակ մարդուն: Վորպես պա- տասխան, Նորդենշելդը ցույց եր տալիս, վոր սպիտակ մարդն իր կատարելագործված զենքով իրավունք չունի վորսալ հնդիկնե- րին սպանելու նրանց, իբրև ինչ վոր վորս: Շատ անգամ եր փորձել հետ կասեցնելու իր կարմրամորթ բարեկամներին փոխա- դարձ ինքնաբնաջնջումից: Այդ հորդորները, սակայն, չեյին կա- րող արձագանք գտնել կարմրամորթների սրտերում, վորոնց մեջ հարևանների հետ ունեցած կռիվը նրանց առորյա կենցաղի ամենասովորական յերևույթներից մեկն և կազմում:

Գրան-Չակոյի տեղացիների մեջ մինչև այսօր ել պահպանվել են շատ աշխարհի գծեր, վորոնք մեզ զգվելի և հակաբնական են թվում, իսկ նրանց տեսակետով՝ միանգամայն բնական: Նրանք, որինակի համար, բնական են համարում, յերբ մայրը նեղվելով նորածին մանկան կողմից՝ կսպանի նրան. ճիշտ նույնպես և միան- գամայն որինական և համարվում, յերբ վորդին սպանում և զառամյալ հորը կամ կույր—պառավ մորը, յեթե նրանք ի վի- ճակի չեն իրենց կերակրելու: Պատահում և սակայն, և ավելի վատը. նրանց մեջ կիրառվում և և աղավաղեցներին կենդանի հրկիզելու սովորությունը, մարդկանց, վորոնց վերաբերմամբ հա- մոզում կա, վոր նրանք վհուկների և չար վոգիների հետ հարա- բերություն ունեն:

Մի անգամ Նորդենշելդը յուր մի քանի ընկերների հետ դուր- ցույցի ուղեկցությամբ մուտք գործեց հյուսիսային Չուկոյի ամա- նախոր տեղերից մեկը: Այնտեղ նա ընդհարվեց մի պատերազմա- սեր ցեղի հետ, վորի առաջնորդը չափազանց նենդ մարդ եր: Առաջնորդի սիրտն, իրավ և, հաջողվեց քաղցրացնել ընծաներով, բայց զինվորներն առանց կատակի մտածում եյին սպանել սպի- տակաղևմ ոտաբականներին և զրավել նրանց զենքերն ու դան-

գամաշիները: Նորդենշելդը մտաւ Բուրիվիայի սիրտը, վորտեղ այդեկեց յերբեմնի բաղմամբիւ ցեղերի վերջին մնացորդներին, վորոնք ապրում են Մադեյրայի վտակների մոտ և զբաղվում վորսորդութեամբ: Նրանց զգեստի համար վորպես նյութ եր ծառայում ֆիկուսի կեղեր, իսկ նետեր պատրաստում եյին մի առանձին խտից:

Մարայի ամերին նրանք ապրում են բամբուկեց շինած քառանկյունի խրճիթներում, վորոնց պատերը ձեւում են կալով-իսկ կտուրները ծածկում արմավենու տերեւներով: Թաչերն ու սրբապատկերները կարծեք ասում են, վոր նրանք քրիստոնյաներ են: Բայց իրականութեան մեջ նրանք բոլորովին հեթանոս են և մինչև այսօր եւ չեն թողել իրենց կրօնական պարերը սրբազան խաբուսկների շուրջը, վորոնք կատարվում են տարօրինակ, անհոռնի գիմակներով և ջալլամի փետուրներով զարդարված հատուկ զգեստներով: Նրանք սարկութեան մեջ են զանվում սպիտակների մոտ: Ինպի ողին ունեցած հակումը նրանց դժբախտութեանն և կազմում. այդ կիրքը հարկադրում և նրանց ծանր պարտքերի տակ ընկնել, վորը վճարում են տնկարաններում և կաուչուկի անտառներում ծանր ու քայքայիչ աշխատանք կատարելով:

Իկո Գրանդի ընթացքով (Իկո-Մարմորի վտակն և, վորն իր հերթին հանդիսանում և Մադեյրայի վտակը և թափվում և Ամադոնի մեջ) Նորդենշելդն իր հնդիկ ուղեկիցների և թիավարների հետ անցավ խիտ, կուսական անտառների միջով: Շատապարհին նրան հաճախ պատահում եյին գետի ամին անշարժ նստած հնդիկների խմբեր և առանձին կերպարանքներ, վորոնք ճանապարհ եյին գնում նրանց իրենց լուս հալացքներով: Վոչ սակավ անգամ Նորդենշելդը ասի եր դուքս դալիս և ալցելում եր տեղացիների գլուղերը, վորոնք թաղնված եյին կուսական անտառներում և շրջապատված բանանի տնկարաններով և բանանի ու բնդեղենների փոքրիկ ածուներով: Այստեղ նա դիտում եր, թե ինչպես յերկխաները խաղում են ձեռնասուռն կապիկների հետ, ուսումնասիրում եր հնդիկների անային կենցաղը և նրանց բարքերը: Այդ յերկրի անտառներում և կալուստ հարթութեւններում նա կարող եր ուսումնասիրել հարուստ կենդանական աշխարհը, հատկապես թռչուններին — սև արագիլներին, վայրի բաղերին, քաջահամբերին, ֆլամինգներին* և այլն:

* Շատապարհին կարմրաթև սագի

ճակոբոս հնդիկներին վորոնելու ժամանակ Նորդենշելդը յուր սայլակով, վորին յեզներ եյին լծած, — հասավ ինչ վոր գետին Այդ ժամանակ գետը դուրս եր յեկել ափերից և սայլակով անցնել մյուս ափը հնարավոր չեր: Հարկ յեղավ թողնել սայլակը գետի ափին և, վերցնելով ամենաանհրաժեշտ իրերն, անցնել գետը՝ նավակով: Գետի մեջտեղում հանկարծ ջրից գլուխը դուրս հանեց մի արլիզատոր* և քիչ մնաց խորտակեր նավակը: Նրան փախցրին աղաղակներով: Այնուհետև պետք ե գնային վոտըով: Անտառն այդ տեղերում հեղեղված եր ջրով, այնպես վոր ճանապարհորդներն ստիպված եյին ցատկոտել մի ծառից մյուսը, բռնելով նրանց ճյուղերից, կամ թե չե կացիններով կտրտել ծառերի ճյուղերը, ճանապարհ բաց անել և հեղեղված տեղերն անցնել նավակով: Վերջապես հասան չոր տեղերի: Թարմ հետքերը ցույց եյին տալիս հնդիկների մոտիկությունը, և շուտով Նորդենշելդն իրեն գտավ խակոբոս հնդիկներին գլուղում:

Այդպիսի անակնկալ այցելությամբ դարմացած, հնդիկներն սկզբում փորձեցին ոտարականներին վախեցնել նետաձգությամբ, յենթադրելով, վոր նրանք յետ կփախնեն. բայց յերր այդ մանյովը ցանկացած եֆֆեկտը չառաջացրեց, Նորդենշելդին և նրա ուղեկիցներին բնակարան հատկացրին մի պանդոկանման տուն մեջ: Այդ բավական ընդարձակ բնակարանի մեջտեղում կանգնած եր մի բավական մեծ կավե անոթ, լիքը մի ինչ վոր հեղուկով, վոր իր համով մի փոքր գարեջուրն եր հիշեցնում: Հնդիկները յերաժշտական գործիքների հնչյունների տակ պտտում եյին այդ անոթի շուրջը: Նետ ու աղեղով զինված հարևանները նույնպես յեկան այդտեղ և հյուրասիրվելով տեղացիներին գարեջրով, մտադիր եյին գիշերել այդտեղ, նախապես կախելով իրենց անկողինները. անկողինների տակ նրանք թեթև կրակ եյին անում, վորպեսպի փախցնեն մոծակներին և գիշերներն ել շատ չբարսեն:

Այդ մարդկանց գոյության գլխավոր աղբյուրը հանգիստնում են նրանց խրճիթները շրջապատող մեծ տնկարանները: Այդտեղ նրանք վերամշակում են բանան, մանիոկ և բրինձ: Ժողոված մթերքները պահպանվում են նրանց մոտ հատուկ մառաններում, վորոնք շինվում են սյուների վրա: Վորպես հյուրասիրություն, ոտարեկրացիներն այդտեղ ստացան յեզիպտացորենի արմատ:

* Ջրային կինգանի

ներ, մանիփոկի բոված պտուղներ, մանիփոկից պատրաստած ալյուր
և խաշած ձուկ:

Տղամարդիկ ափսիս մեծ հակում են ցույց տալիս դեպի զար-
դարանքները, քան թե կանայք: Նրանք իրենց դեմքը նկարա-
դարդում են կարմիր ներկով, իսկ ձեռքերը՝ մանիշակապուշն.
նրանց քթի կռճիկային մասում բաց և արվում մի անցք, վորի
մեջ նրանք մտցնում են դեղեցկության համար պղպեղակեր թոչնի
փետուրներ: Ականջների բլթակների միջից նրանք անց են կաց-
նում ծովային խողի առաջին ատամները, իսկ ձեռքի վերին մասը
դարդարում են թութակների բմբուլից և փետուրներից պատրաս-
տած մանյակներով: Վոչ տղամարդիկ և վոչ ել կանայք մազերը
չեն հյուսում, վորոնք թափվում են նրանց ուսերից յերկար
փնջերով: Մարմինը շփում են վանիլով: Տոներին հագնում են
ունեցած բոլոր դարդարանքները. մազերի մեջ խրում են թու-
թակների և պղպեղակեր թոչնի կարմիր, կապույտ և դեղին փե-
տուրներ, իսկ պարանոցը փաթաթում են կապիկների ատամնե-
րից շինած շքեղ շղթայով: Այգպիսի շղթայի վրա ատամների
թիվը հասնում և հազար հինգ հարյուրի, իսկ վորովհետև դրա հա-
մար վերցնում են միմիայն առջևի ատամները, ուստի և յուրա-
քանչյուր հնգիկից, վորպեսզի նա կարողանա այգպիսի հուլունք-
ներ պատրաստել, պահանջվում և սպանել իր պրիմիտիվ աղեղով
մոտավորապես յերկու հարյուր կապիկ:

ՍԵՎ ՄԱՅՐ ՅԱՄԷՆ ԸՍՑ ԼԱՅՆՈՒԹՅԱՆ



Գ. Ստենլի

Գ. Ստենլին մեծ աղմուկ էր հանել Աֆրիկայի անհայտ ափերում կատարած ճանապարհորդութիւններով, լուծելով Լիվինգստոնին փնտռելու դժվարին խնդիրը:

Հաջողութիւնը թեւավորում է 1874 թ. աշնանը Ստենլին կրկին Ջանգիբարումն է, վորտեղից արշավանքի յե ձեռնարկում դեպի սև մայր ցամաքի խորքերը: Նա 300 բեռնակիրներէից բաղկացած մի քարավան կազմեց, վորը պիտի տաներ ուտեստի պաշարը, կտորեղեններ, խիունջներ, պղնձե լար, դենքեր, մասերի բաժանվող նավակներ, վորոնք անհրաժեշտ էյին յերկարատե ճանապարհորդութեան ժամանակ: Սկզբում նա պտտեց Վիկտորիա Նյասսա լճերի շուրջը, այցելեց Ուզանդուն և Ուշիշին, վորտեղ յերբեմն ապրել էր Լիվինգստոնը, իսկ հետո պտտեց նաև Տանզանիկա լճի շուրջը:

Յերկու տարուց հետո Ստենլին հասավ Լուալաբայի ափերին: Դա ամենահեռավոր արևմտյան կետն էր, վորից դենը Աֆրիկայի խորքերը մուտք չեր գործել և վոչ մի յեվրոպացի, Հնդկական օվկիանոսի կողմից: Ստենլիի առաջ փութած էր միանգամայն անծանոթ մի վայր, վոր քաղաքների վրա նշանակվում էր մեծ սպիտակ ըծի ձևով: Այդտեղ էր գտնվում ստրուկներ վաճառող արաբ առևտրականների Նյանգվե կոչվող արևմտյան ծայրի շուկան: Թեև այդ կետը բերող բոլոր ճանապարհները միանում էյին, այնուամենայնիվ արաբները վռչինչ չգիտէին այդ անհայտ յերկրի կյանքի և բնութեան մասին:

Ճանապարհորդներին սպասում էյին ամեն տեսակ վտանգներ և զրկանքներ: Բայց Ստենլիի յերկաթյա կամքի համար զոյաութիւն չունեն և վոչ մի արգելք. նա վճռականապէս վորոշել էր

վոչ մի զեպքում չվերադառնալ արևելք, այլ գնալ զեպի արևմուտք, զեպի Առլանտյան ովկիանոսը, թեկուզ իր իսկ կյանքի գնով: 1876 թ. նոյեմբերի 5-ին, արարական ազդեցիկ առաջնորդ Տիպու-Տիպի ուղեկցութեամբ նա ուղևորվեց զեպի հյուսիս, զեպի անառոնների շրջանը:

Տիպու Տիպի խումբը բաղկացած էր 700 հոգուց — տղամարդիկ, կանայք և յերեխաներ: Մտնելին ունեւ 154 ուղեկիցներ, նրանք զինված էին հրացաններով, ատրճառակներով և կացիներով: Անձի պես յերկար ձգվելով, քարավանը մտավ անտառ, խորատուզվելով հսկայական արեադարձային բուսականութեան ծովի մեջ: Հզոր շարքերով յերկինք էին բարձրանում ծառերը: Պատուտակներով փաթաթված արմավենիները կոճում էին միմիանց հետ տեղի և լույսի համար: Ներքեում թափ զորդի պես փռվել էին ձարխոտերն ու յեղեգները, իսկ փշոտ թփերը կազմում էին անանցանելի թփուտներ: Զանազան տեսակ պատուտակներ փաթաթվել էին ծառերի բներին՝ ցանցի պես կախվելով ճյուղերից: Վերից, սաղարթավոր կամարներից գետնին էր իջնում խոնավութունը. հեղձուցիչ և ծանր ողը հագեցած էր բույսերի բուրմունքով և գոլորշիներով, վոր բարձրանում էր հողից: Ներքև — բամու և վոչ մի նշույլ՝ վերև՝ ծառերի զազաթների վրա, ժամանակ առ ժամանակ անցնում էին փոթորիկներ, ներքև՝ անտառային հավերժական կիսախավարի մեջ չեք շարժվում և վոչ մի տերև:

Մոնապութեամբ հագեցած փխրուն հողը թույլ չեք տալիս ծառերին արմատները տարածել շատ խորը, և դրա համար ել ծառերն ու թփերն աշտուղ հողի մեջ հենարան չունենին. հաճախ հարյուրամյա հսկաների հզոր արմատները, զրեթե ամբողջապես ընկած էին լինում գետնի յերեսին:

Վարավանը քայլառքայլ ճանապարհ էր հարթում իր համար Մուրավյայի արեադարձային անտառի միջով, ճանապարհին՝ յուրաքանչյուր քայլափոխին նրանց պատահում էին հազարոտյանների, բզեզների և դանազան այլ միջատների ամբողջ հրոսակներ: Պիփոններ (մեծ տեսակի ոձեր), վորոնք թաղնվում էին ծառերի արմատների միջև և հսկում իրենց վորսին, կապիկներ, վորոնք սրբովում էին պատուտակների վրա և աննկարագրելի ճարպկութեամբ թռչկոտում ծառից-ծառ, պավիտներ և շնագանդեններ, վորոնք ողը լցնում էին իրենց ձայներով: Այս միջավայրում, տեղ-տեղ, ուր արևի ճառագայթները չէին թափանցել, դանդաղ շարժվում էին մեր ճանապարհորդները. բռնները առ-

նում եյին գլխներին, վորպեսզի ձեռքերն ադատ լինեյին, առանց վորի չեյին կարող անցնել թավուտների միջով: Նավակի առանձին մասերը տանող բեռնակիրների համար, վոչ սակավ անգամ, հարկավոր եր լինում բաց անել հատուկ ճանապարհ: Յեւ այս բոլորը—խեղդող ոգի մեջ, վոր ծաղկանոցն եր հիշեցնում, խորին աղջամուղջի մեջ, Պատահում եյին դեպքեր, յերբ գնում եյին խալխափելով, ինչպես մուտ նախասենյակում: Աղջամուղջներն ընդհատվում եյին միայն անտեսանելի խավար գիշերներով: Զմեռային յերկար գիշերներ ըստ հոգիների ճանապարհորդների նման, յուրաքանչյուրը յերազում եր գուրս գալ այդ խուլ անկյունից և ընկնել ցերեկվա արևի պայծառ լույսը:


Ստենլիի ուղեկիցները շարքերում սկսեց տատանում առաջանալ: Տիպու-Տիպը հայտնեց, վոր այլևս հնարավոր չե առաջ շարժվել և վոր ժամանակն է յետ դառնալ: Մեծ դժվարությամբ կարողացավ համոզել նրան Ստենլին—20 ուր ևս առաջ գնալ: Անսովոր զրկանքների մեջ քարավանը վերջապես կրկին դուրս յեկավ լուսայաբայի ափը:

Հանդարտ և վեհորեն թավալում եր գետն իր ջրերը մի յերկրում, վորի բազմաթիվ սև բնակիչները դեռևս միանգամայն անհայտ եյին յեվրոպացիներին, վորտեղ դեռևս վոտ չեր դրել սպիտակ մարդը... Անտառի թավուտի մեջ փղերը, լոտոսի և յեղեգների տերևների մեջ գետածիբերը նիհրում եյին խաղաղ, առանց անհանդիստ լինելու յեվրոպացիներին: Յեւ այդ անհայտ, հզոր գետը նվաճելու խնդիրը դարձավ Ստենլիի միակ նպատակը:

Դիտի աջ ափին վրաններ կանգնեցրին և շրջապատեցին ցանկապատով: Դեմ ու դեմը, գետի ձախ ափին յերևում եր տեղացիների գյուղը: Ստենլին հրամայեց կարգի բերել յուր նավակը, վորպեսզի անցնի մյուս ափը և հարաբերության մեջ մտնի տեղացիների հետ: Այստեղ նրա գլխում մի միտք ծագեց. փոխանակ արևադարձային անտառի միջով ընկած հողմեղուցիչ ճանապարհի. — ոգտվել լայն գետով, վորպես ավելի հարմար ճանապարհ: Շինարարական նյութեր ունենալու դեպքում, կարելի կլինեք կառուցել թեկուզ մի ամբողջ նավատորմիդ:

Թմրկահարության ազդանշանով անմիջապես հավաքեցին և քապեղիցիայի բոլոր մասնակիցներին, վորոնց և Ստենլին բացատրեց իր պլանը: Մեծամասնությունը բացասական վերաբերմունք ցույց տվեց առաջարկած պլանին, առանձնապես բողոքեց նրա դեմ Տիպու-Տիպն իր արարներով:

Այդ ժամանակամիջոցում Թարգմանները բանակցութեան մեջ
 Եյին մտել զետի ձախ ափին գտնվող տեղացիներին հետ, ընդ վո-
 րում վաչրենիները հրավիրում Եյին սպիտակ մաքրուն յուր տասը
 ծառաներով հետեյալ առաջնա դալ վոչ հետու գտնվող փոքրիկ կըզ
 դին՝ տեսակցութեան համար, վորտեղ խոստացաւ զնալ և ցեղա-
 պետը յուր տասը գինվորներով:



Ստենլին Կոնգոյի վրա. նրա եկապեղեցիայի եպիզոդներէց մեկը:

Ստենլին կասկածելով, վոր կարող և ծուղակ սարքվել, գիշերը
 կզդին ուղարկեց ըսան զինված մարդ՝ դարան մանելու, իսկ առա-
 վոտայան աշտեղ զնաց Ֆրանկ Պոկոկը — տասն ուղեկիցներով,
 միակ սպիտակը, վոր կենդանի յեր մնացել Ստենլիի Զանդերա-
 րից զուրս պալու ժամանակ վերցրած յերեք սպրտակներէց: Ինքն

Ստեփանն իր նավակի մեջ քիչ հեռու սպասում էր, թե ինչով կվերջանան բանակցութիւնները։ Ստեփանն ճիշտ էր գուշակել։ հազիվ պատվիրակները մոտեցել էին կղզուն, յերբ ամից ամիտեղ դիմեց մի ամբողջ նավախումբ։ նավակների մեջ նստած վայրենիները, լարված աղեղներով և նիզակներով ու ռազմաշունչ ազդակներով գրոհեցին Ստեփանի մարդկանց վրա։ Հանդիպելով զնդակների տարափին, նրանք արագ յետ նահանջեցին և ազատվեցին փախստի դիմելով։ Յերբ հետևյալ ուրն Ստեփանն զինված խմբով անցավ գետի ձախ ափը, տեղացիների գլուղերը հիմնովին դատարկ գտան և ճանապարհորդներին այդտեղ իրենց լայն մեռած ժպիտներով վողջուհեցին մարդկային դանպերը, վորոնք աչքի էին ընկնում փողոցների յերկու կողմերում յեղած տների մօտ։ Դրանք տեղացիների թշնամիների կամ գերիների մնացորդներն էին, վորոնց կերել էին տեղացիները յուր ժամանակին։

Չնայելով տեղացիների բացարձակ թշնամական տրամադրութեան, այնուամենայնիվ Ստեփանն անդրդվելի մնաց իր վորոշման մեջ — զնալ դեպի վար՝ Լուսաբայի հոսանքով։ Վճռված էր, վոր նա յերեսուռ ուղեկիցների հետ նավարդի գետի միջով, իսկ Տիպու-Տիպը և Պոկոկը մնացած մարդկանցով կզնան ափով։ Դետի ափերը բավական խիտ էին ընակեցրած, բայց տեղացիներն ակնհայտի թշնամական վերաբերմունք էին ցույց տալիս դեպի ճանապարհորդները։ Նրանք, ի հարկե, բաց հարձակման դիմել չէին վճատահանում և հենց վոր ճանապարհորդները մոտենում էին, նրանք սովորաբար ցրել ու ցան էին լինում և փախչում գլուղերից, բայց հեռվից ճանապարհ էին ձգում նրանց ռազմատենչ ազդակներով։ Մեկ անգամ յերբ Ստեփանն պիտի կանգ առներ կղզիներից մեկի վրա՝ Տիպու-Տիպի ուշացած խմբին սպասելու համար, վայրենիներն ողտվելով Ստեփանի ժամանակավոր բացակայութեանից, փորձեցին կղզու վրա հարձակվել իրենց մակուկներով, բայց Ստեփանի վերադարձը նրանց փոխտաի մատնեց։ Այդ ժամանակվանից Ստեփանն վճռեց ափից չհեռանալ և կառ պահպանել երապելդիցիտայի այն մասի հետ, վոր առաջ էր շարժվում ցամաքով։ Մինչ այդ, քարավանում սկսեցին նկատվել ծաղկով և փորհարկիքով հիվանդանալու դեպքեր, այնպես վոր պակաս չէին և մահացութեան դեպքերը։ Իր մոտենալու հետևանքով, տեղացիներից լքված գլուղերից մեկում Ստեփանն դտավ մի մեծ հին նավակ, վոր նորոգեցին և զցեցին գետը, դարձնելով լողացող հիվանդանոց։ Ինչ առ քիչ տեղացիները համարձակ դարձան. նրանք սկսեցին

գնդակակոծել նաժակաները, իսկ յերբեմն ել անցնում էյին բացարձակ հարձակումներն Հեռ մղել այդ հարձակումներն, ի հարկն, առանձին զժվարությունն չեր ներկայացնում, բայց նրանք իրենց հետեանքում զոհեր եյին տալիս, և՛ սպանվածներ, և՛ վերավորվածներ։ Այդպիսի մի կտրճատեւ ընդհարումից հետո տեղացիները, մուժը վրա հասնելուն պես, իրենց ամբողջ նավատորմիդով թագնվեցին կղզիներից մեկի վրա. պարզ եր, վոր լույսը բացվելուն պես, նրանք մտադիր եյին վերսկսել հարձակումը։ Այդ ժամանակ Ստենլին ող տօկելով միությունից, դադարադդի մոտեցավ կղզուն և կտրեց պարանները, վորոնցով տեղացիների նավակները կապված եյին ափին. մակույկներն սկսեցին լողալ դեպի վար, հոսանքով և Ստենլիի մարդիկ վորսացին նրանց։ Այդպես Ստենլին ջլատեց վայրենիներէ մտադրությունը և ուժեղացրեց յուր նավաջողատը։

Հետոհետեւ բարդացող զժվարություններն և արգելքների ազդեցութեան տակ, Տիպու- Տիպը վերջիվերջո վճռականապես հայտարարեց Ստենլին, վոր ինքն իր մարդկանցով ալլիս առաջ չի գնա, այլ յետ կդառնա։ Եքսպեդիցիան յերկու մասի բաժանվեց, Ստենլիի հետ առաջ անցան 150 մարդ, վորոնց մեջ զգալի թիւով կանայք և յերեսաներ։ Տեղացիներից զրաւած մակույկները ձողերի ողնութեամբ կապեցին զույգ-զույգ, վորպեսզի ավելի դիձացկուն դարձնեն։ Նավակներում, վորոնց թիւն ալժմ հասնում եր 23-ի, տեղավորված եր քսան պարենամթերք։ Դեկտեմբերի որերից մեկն եր, յերբ խմբերը բաժանվեցին և գնացին տարբեր ուղղութեամբ, մեկը դետի ընթացքով դեպի արեւմուտք, մյուսը դեպի յետ՝ արեւելք։

Ստենլին համոզված եր, վոր այն անձանոթ դեաը, վորով նա նավում եր, Կոնգո գետն եր, վորի ափունքներն արդեն հայանի եյին չորս հարյուր տարուց իվեր։ Բայց նա անհնար չեր համարում և այն, վոր Լուալաբան միանում և կամ Նեղոսի, և կամ թե և՛ Նիլերի հետ։ Սյս հանելուկի լուծումը, վոր կապված եր այնքան զրկանքների և զժվարությունների հետ, կազմում և Ստենլիի զլիսավոր ծառայությունը, վորի ձեռնարկությունը յուր խիզախութեամբ ու նշանակութեամբ համարձակ կերպով կարելի չե դասել Ամազոնի և Միսսիսիպիի հետազոտությունների շարքը։

Ստենլիի հետագա առաջխաղացումը խիստ զժվարացավ տեղացիների հետ մշտապես ընդհարումներ ունենալու պատճառով։ Տիպու-Տիպից բաժանվելուց հետո առաջին հանդատակայանը դեռևս հաջող

կարելի յեր համարել, տեղացիները դեպի ոտարականները խաղաղ եյին տրամադրված, բայց հետո գործը բարդացավ. անտառը շարունակ աղմկվում եր տեղացիների զինվորական թմբուկներին ձայներով, նրանք անցնում եյին գյուղից-գյուղ, ափից-ափ:

Մեկ անգամ դետի ափից սկսեցին հեռանալ զինված տեղացիներին նավակները, վորոնք ողակի պես շրջապատեցին Ստենլիի նավաջոկատը: Այսպես, բանակցելով մեկը մյուսի հետ, յերկու կողմերն ել լողում եյին հոսանքով: Տեղացիներն առանց մտիկ անելու Ստենլիի հավաստիացումներին, վոր նա միայն խաղաղություն ե ցանկանում, — պահանջում եյին, վոր նա յետ դառնա այնտեղ, վորտեղից յեկել ե: Բանն անշուշտ արյունահեղությամբ կվերջանար, յեթե հոսանքը վիճաբանող կողմերին չտաներ հասցանք այնտեղ, վորտեղ սկսվում եյին տեղացիների մեկ ուրիշ ցեղի տիրապետությունները, վոր թշնամի յեր առաջիկներին, վորոնք և գերադասեցին խոհեմաբար նահանջել:

Հետեյալ անգամ բանն ավելի լուրջ բնույթ ստացավ: Ստենլիի նավաջոկատի վրա տեղաց նիղակների և թունավորված նետերի մի ամբողջ տարափ, այնպես, վոր Ստենլիի մարդիկ հարկադրված յեղան գործի դնել հրազենները, ընդ վորում ճանապարհորդները ձեռք բերին՝ վորպես պատերազմական ավար, տեղացիների մի քանի վահաններ, մի հանգամանք, վոր հետագայում նրանց մեծ ոգուտ տվեց: Այդպիսի գրոհները, վորոնք անխուսափելիորեն վերջանում եյին տեղացիների պարտությամբ, կրկնվեցին մի քանի անգամ:

Վրա հասավ 1877 թիվը, յերբ ճանապարհորդներին պատահող խաղաղ տեղացիները նախադդուշացրին նրանց, վոր մոտիկ տեղում գետի վրա վտանգավոր սահանքներ են սկսվում: Յեմ ահա շուտով լսվեց այդ սահանքների աղմուկը: Նավաջոկատը սահում եր ջրի վրայով գետի աջ ափի մոտ, զգուշությամբ ականջ դնելով մոտակա ջրվեժի մոնչյունին, յերբ հանկարծ տեղացիների ամբոխը կարմիր ու դեղին գույներով ներկած մարմնով, վռնոցով և մոնչյունով հարձակվեցին ճանապարհորդների վրա: Ստենլին նավերը դասավորեց պատերազմական կարգով, բոլորն ել լցրին հրացանները, իսկ նրանք, վորոնք չեյին մասնակցում կռվին, նրանց ել ծածկեցին տեղացիներից խլած վահաններով: Ի պատասխան թշնամիների նեղակների և նետերի, Ստենլին կրակ բաց արեց: Հնարավորություն չունենալով պահանջվող արագությամբ հետ դարձնելու իրենց յերկար նավակները, տեղացիները թողեցին նրանց և խուսափեցին լողալով:

Սկսովում էյին սահանքները, և այստեղ տեղացիներին հարձակումները վերականգնին և՛ ցամաքի, և՛ ջրի վրա: Յերբ սահանքներն անցնելու համար ճանապարհորդներն ափ հանեցին մակուշկները և քարշ տվին զեպի ցամաք, կտրտելով և ճանապարհ բաց անելով արևադարձային անտառի միջով, այդ հարձակումներն առանձնապես վտանգավոր դարձան: Մեկ անգամ տեղացիները փորձեցին ճանապարհորդներին բռնել ցանցերով, բայց այդ փորձը փոքրերգական վախճան ունեցավ նրանց համար: Բոլոր ցեղերն ևլ մարդակեր էյին և բավական հաճույքով կճաշակեյին անհայտ տեղերից յեկած այդ ոտար մարդկանց միւրը:

1877 թվի հունվարի վերջին Ստենլիի նավախումբը հասավ հասարակածին, և զեաը ակնհայտնի թեքում ստացավ զեպի արեւմուտք, — ապացույց այն բանի, վոր նա զեպի նեղուցը չեր հոսում: Վերջապատ հաջող կերպով անցան և վերջին յոթերորդ սահանքը: Այս բոլոր սահանքներն ստացան Ստենլիի ջրվեժներ անունը:

Սահանքներից ներքե զեպի հունը տեղ-տեղ լայնանում եր մինչև յերեք կիլոմետր, այնպես վոր մի ափից մյուս ափը հաղիվ եր նկատվում, և Ստենլիի նավախումբը հաճախ ընկնում եր բազմաթիվ կղզիների միջև ընկած հաղորդակցող գետերի լարյուրին: Թուր, Վտանդը տեղացիների կողմից մնում եր նախկինը, նավակների մեջ շարունակ յերևում էյին վայրենիները՝ ներկած զեմքերով, թռչունների կարմիր ու կանաչ փետուրներով զարդարված, ձեռքերին փղոսկրից պատրաստած ապարանջաններով:

Մի գյուղում ճանապարհորդները տեսան շատ հետաքրքիր տաճար: Նրա կտր տանիքը հանդստանում եր փղի 33 ժանիքների վրա: Տաճարի մեջ տեղում գտնվում եր փայտից քանդակած, կուռքի պատիկերը կարմիր ներկած, սև աչքերով, մազերով ու միբուրով: Այս վայրենիների դանակները, նիզակները և պատերազմական կացիները կուած էյին մեծ արվեստով, նրանց զարդարանքները կազմում էյին պղնձ և յերկաթե մատանիներ ու փղոսկրե ապարանջաններ: Խրճիթների մոտ, սյուների վրա որորվում էյին մարդկային գանդեր: Գետի ափերն ու կղզիները ծածկված էյին արեւ-փաղարձային անսահման անտառներով: Այստեղ իրենց անթիվ աճած արմատներով աճում էյին բարձր, ռձաձև պատուտակները՝ փետրածե տերեւներով, վիշապենիներ (*драконовое дерево*), կաուչուկի ծառը և շատ ուրիշ բույսեր: Արգելքներն ու վտանգները հետևում էյին ճանապարհորդներին ամեն քայլափոխին. մերթ

ժայռեր, մերթ սահանքներ, մերթ ջրապտույտներ, այս բոլորը պահանջում էյին մշտական, լարված ուշադրություն: Գետը վխտում էր կոկորդիլոսներով և գետաձիներով: Բայց ամենավտանգավոր թշնամիները տեղացիներն էյին: Կռիվը նրանց հետ և մշտապես արթուն լինելու անհրաժեշտությունը քայքայել էյին Ստենլիի և նրա ուղեկիցների ջղերը:

Ուռլունգ գյուղում, վորի բնակչությունը բարեկամաբար եր արամադրված յերևում դեպի ճանապարհորդները, — Ստենլին առաջին անգամ իմացավ, վոր գետը, վորով նա գնում էր, — իրոք կոչվում է Կոնգո: Այստեղ ճանապարհորդները լրացրին իրենց պարենամթերքի պաշարը, և թմբուկների ձայներն այստեղ վնչ թե հարձակման աղդանշան էյին, այլ խաղաղ առևտրի: Միայն վըստահել վայրենիներին, իհարկե, չեք կարելի. քիչ անգամ չեք պատահել, վոր գետի ափին ճանապարհորդներից քարեկամաբար ու սիրով բաժանվելուց հետո, նրանք իրենց նավակներով ընկել էյին նրանց յետևից և հալածել ակնհայտ թշնամական մտադրությամբ: Այդ տեղացիներն ավելի վտանգավոր էյին, քան թե նրանք, վորոնց առաջ պատահել էր Ստենլին. նրանցից շատերը զինված էյին հրազենով, վորը, ըստ յերևույթին, նրանք ձեռք էյին բերել Ատլանտյան ովկիանոսի ափերի մոտ գտնվող յերկրներից: Մի անգամ ըանը հասավ իսկական ճակատամարտի — ջրի վրա, ընդ վորում Ստենլիի նավախմբի դեմ վայրենիները դուրս էյին բերել վաթսուռ և յերեք նավակ և յերկու կողմից ել սկսել էյին գործի դնել հրացանները: Ստենլին փրկեց այն հանգամանքը, վոր ընդհարման հենց սկզբում վիրավորվեց տեղացիների առաջնորդը:

Գետը թեքվում էր հարավ, — արդեն անցել էյին այն աղեղը, վոր գործում էր Կոնգոն: Այս ճանապարհին ճանապարհորդներն ընդհանուր առմամբ 32 ընդհարում ունեցան տեղացիների հետ: Այժմ Ստենլիի նավախումբը մոտենում էր մի դժվար շերտի. դեպի հոսանքը կրկին արգելակվեց ջրվեժներով և փրփրադեպ սահանքներով: Ստենլին այդ ջրվեժներին Լիվինգստոնի ջրվեժներ անունը տվեց:

Այստեղ հարկ յեղավ ընդհարվել նոր դժվարությունների հետ: Մի տեղ միանգամից խեղդվեցին մի քանի մարդ և կորան մի քանի նավակներ: Ստենլին ստիպված յեղավ կանդ առնել և նոր նավակներ շինել: Հենց այստեղ, արադ հոսանքում կորավ Պոկոլը, վերջին սպիտակը, վորը և ուղեկցում էր Ստենլին Զանզիբարից սկսած:

Վերջիվերջո գետով առաջ շարժվելն անհնար դարձավ, և Ստեն-
լին ստիպված յեղավ ձգել նավակները և գնալ ցամաքով: Ստեն-
լի ուղեկիցները զջրլավել և սովել էլին: Բոլոր մթերքները, վոր
նշանակված էլին փոխանակելու համար, արդեն ծախսված էլին:
Իսկ տեղացիների զանգատները շարունակվում էլին: Մի առաջ-
նորդ, որինակի համար, իր տիրապետութեան սահմաններով անց-
նում է համար, պահանջում էր մի շիշ կոնյակ... Նրա ահանջը բա-
ժարարկեց, նա ստացավ որինավոր թյունոտ (mymok):

Իսկայ ահա հասավ տառապանքների վերջը. մինչև Բոմբի, Կոն-
ստանդուպոլիսի մոտ, մնում էր ընդամենը յերկու որովա ճանա-
պարհ: Այստեղ կաշին արդեն առևտրական ֆակտորիաներ և յեղ-
րացիներ: Ստենլին նրանց նամակ ուղարկեց և շուտով ստացավ
պատասխան: Ինչի կարիք վոր զգում էր: Հասնելով Բոմբի, ա իր
մոտ ըստ հույսերից և ձախորդություններից հետո, ինչ որ վա-
ստապարտութեամբ ստացավ լիակատար հանգիստ և քաղաքի
մոտ նա նավով պտտեց Աֆրիկայի շուրջը, արևելյան կողմից,
որպեսզի տեղը հասցնի իր ուղեկիցներին: Այսպես վերադա-
ռնալ Ստենլին հերոսական ֆանտազերգութեանը սև մայր ցամաքի
մոտ, և Հայքենիքում նրան զխմավորեցին մեծ ենտազիազմոտ
հողմեր: Ստենլին իր շուրջը նա լիովին արժանի չէր: Նա առաջինը
զոր լիովին չէր հասցրել և անհաջող էր: Երբ ինչ-որ մեկը
այդ մեյն գառարի բիծը, վոր մինչև այսօր ել աչքի չէր բերում
հիմադրական Աֆրիկայի աշխարհագրական քարտեզի վրա: Նույն
խիղ վայրենիները պատիվ էլին տալիս այդ արտասովոր մարդու
քաջութեանն ու յերկաթյա կամքին, տալով նրան «Բուլա Մատարի»
(«մայուեր կործանող») պատվավոր անունը:

Ստենլին հետքերով գնացել էր ուրիշ հետազոտողներ ևս: Այժմ
Ստենլին ջրվեժին դուրսհեռ անցնում և յերկաթուղու գիծը, իսկ
գետի վրա յերթեկեկում են բազմաթիվ շոգենավեր, և ամբողջ կու-
տուրան, վոր ծաղկում և աճում այդ հզոր գետի վրա, անբաժան
կերպով կապված և Ստենլին անվան հետ:

ԱՍԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220050077

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հյուսիսային բևեռի գյուղացիներ	13
Հարավային բևեռ	16
Հյուսիսային բևեռի գյուղացիներ	20
Հարավային գյուղացիներ	27
Հյուսիսային անապատական Նոր-Գվինեա կղզում	34
Հարավային անապատական Նոր-Գվինեա կղզում	45
Հարավային անապատական Նոր-Գվինեա կղզում	52
Հարավային անապատական Նոր-Գվինեա կղզում	57
Հարավային անապատական Նոր-Գվինեա կղզում	64
Հարավային անապատական Նոր-Գվինեա կղզում	70

